



**«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ
Ֆինանսական հաշվետվությունների
միջազգային ստանդարտներին համապատասխան՝
Ֆինանսական հաշվետվություններ
և անկախ աուդիտորական եզրակացություն**

31 դեկտեմբերի, 2020թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	1
Գործունեության մասին հաշվետվություն	2
Չուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1	Ընդհանուր տեղեկություններ «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի և նրա գործունեության մասին	5
2	Հիմնադրամի գործառնական միջավայրը	6
3	Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ	7
4	Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ	20
5	Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին	21
6	Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ	21
7	Հիմնական միջոցներ	28
8	Ոչ նյութական ակտիվներ	28
9	Պաշարներ	29
10	Տրամադրված կանխավճարներ	29
11	Բանկերում պահվող ավանդներ	29
12	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	30
13	Դրամական նվիրատվությունների գծով պարտավորություններ շահառուներին	30
14	Հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորություններ	31
15	Ստացված դրամաշնորհներ	31
16	Պարտավորություններ շահառուների նկատմամբ	32
17	Հաշվեգրված ծախսեր և այլ պարտավորություններ	32
18	Եկամուտ նվիրատվություններից	33
19	Ծրագրի/նախագծի ծախսեր	33
20	Վարչական ծախսեր	34
21	Պայմանական դեպքեր և պարտավորություններ	34
22	Ֆինանսական ռիսկերի կառավարում	35
23	Իրական արժեքի բացահայտումներ	37
24	Փոխկապակցված կողմերի գծով մնացորդներ և գործարքներ	37
25	Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր	38



Անկախ աուդիտորական եզրակացություն

«ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Մեր կարծիքը

Մեր կարծիքով, կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական վիճակն 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև Հիմնադրամի նույն ամսաթվին ավարտված տարվա՝ ֆինանսական արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Աուդիտի առարկան

Մենք աուդիտի ենք ենթարկել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են.

- ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն՝ առ 2020թ. դեկտեմբերի 31-ը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, և
- ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունն և այլ բացատրական տեղեկատվություն:

Կարծիքի հիմքը

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք կարծում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Անկախություն

Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից թողարկված՝ Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտների) («ՀԷՄՍԻՄ Վարքագիր») սկզբունքների: Մենք կատարել ենք Էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՍԻՄ Վարքագրին համապատասխան:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությանը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները՝ ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալների հետևանքով առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կբացահայտի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով, և համարվում են էական, երբ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կարող են ազդեցություն ունենալ օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի յուրում՝

- որոշում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումների ռիսկը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր աուդիտորական կարծիքը արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացում կամ ներքին հսկողության չարաշահում:

- ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն ղեկավարի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մենք պարտավոր ենք մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա ղեկավարը կամ իրավիճակները կարող են հանգեցնել նրան, որ Հիմնադրամը դադարեցնի անընդհատության սկզբունքով գործունեությունը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, այդ թվում՝ բացահայտումները և այն, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են հիմնական գործարքներն ու ղեկավարն այնպես, որ ապահովվում է ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:


Ալեքսեյ Ռուսանով
Տնօրեն



PricewaterhouseCoopers Armenia LLC

30 դեկտեմբերի 2021թ.


Երևան, Հայաստանի Հանրապետություն


**«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն**


	Ծնթգ	31 դեկտեմբերի, 2020թ.	31 դեկտեմբերի, 2019թ. (Վերաներկա- յացված*)	1 հունվարի 2019թ. (Վերաներկա- յացված*)
<i>Չազ. 37 դրամ</i>				
ԱԿՏԻՎՆԵՐ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	7	887,776	863,864	687,254
Ոչ նյութական ակտիվներ	8	5,818	10,485	23,912
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		893,594	874,349	711,166
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	9	70,185	7,209	5,326
Տրամադրված կանխավճարներ	10	97,661	39,176	29,491
Բանկերում պահվող ավանդներ	11	78,389	117,305	103,914
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	298,722	268,608	555,249
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		544,957	432,298	693,980
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		1,438,551	1,306,647	1,405,146
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Դրամական նվիրատվությունների գծով պարտավորություններ շահառուներին	13	36,415	29,909	30,829
Հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորություններ	14	155,758	159,688	135,439
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		192,173	189,597	166,268
Ընթացիկ պարտավորություններ				
Ստացված շնորհներ	15	142,007	79,565	280,579
Դրամական նվիրատվությունների գծով պարտավորություններ շահառուներին	13	48,325	60,134	56,083
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր		5,734	4,927	4,676
Պարտավորություններ շահառուների նկատմամբ	16	42,883	58,338	58,076
Հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորություններ	14	10,357	10,357	10,619
Հաշվեգրված ծախսեր և այլ պարտավորություններ	17	35,177	42,313	34,172
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		284,483	255,634	444,205
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		476,656	445,231	610,473
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ				
Կուտակված արդյունք		961,895	861,416	794,673
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ		1,438,551	1,306,647	1,405,146

*Տես՝ Ծանոթագրություն 3, սխալի հետևանքով վերաներկայացման մանրամասների համար:

Հաստատվել է հրապարակման և ստորագրվել է 2021թ. դեկտեմբերի 30-ին:


Սպարտակ Սարգսյան
Ազգային տնօրեն




Լիլա Թադեոսյան
Ֆինանսական բաժնի ղեկավար

5-38 Էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

**«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ
Գործունեության մասին հաշվետվություն**

	Ծնթգ.	2020թ.	2019թ. (վերաներկայացված*)
<i>Հազ. ՀՀ դրամ</i>			
Եկամուտ			
Եկամուտ նվիրատվություններից	18	1,871,290	1,625,433
Այլ եկամուտ		5,508	5,716
Տոկոսային եկամուտ		2,269	2,666
		1,879,067	1,633,815
Ծախսեր			
Ծրագրի/նախագծի ծախսեր	19	(1,481,111)	(1,228,534)
Վարչական ծախսեր	20	(306,295)	(301,212)
Ֆինանսական ակտիվների արժեզրկում		(4,234)	-
Տոկոսային ծախսեր	14	(12,181)	(12,506)
Արտարժույթի առքուվաճառքից եկամուտ		22,735	-
Արտարժույթի փոխարժեքից օգուտներ՝ հանած վնասներ		(7,272)	(5,843)
		(1,788,358)	(1,548,095)
Տարվա արդյունք		90,709	85,720
Այլ համապարփակ եկամուտ			
Ակտուարային օգուտ/(վնաս)		9,770	(18,977)
Տարվա արդյունք և այլ համապարփակ եկամուտ		100,479	66,743

*Տես՝ Ծանոթագրություն 3, սխալի հետևանքով վերաներկայացման մանրամասների համար:

**«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ
2020 թ. ապրիլի 1-ին փոփոխությունների մասին հաշվետվություն**

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Կուտակված արդյունք
Առ 1 հունվարի, 2019թ. (վերաներկայացված*)	794,673
Տարվա արդյունք Ակտուարային վնաս (վերաներկայացված*)	85,720 (18,977)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի, 2019թ. (վերաներկայացված*)	861,416
Առ 1 հունվարի, 2020թ. (վերաներկայացված*)	861,416
Տարվա արդյունք Ակտուարային օգուտ	90,709 9,770
Մնացորդն առ 31 դեկտեմբերի, 2020թ.	961,895

*Տես՝ Ծանոթագրություն 3, սխալի հետևանքով վերաներկայացման մանրամասների համար:

**«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն**

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ. (վերաներկայացված*)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք նախքան հարկումը ճշգրտումներ`	90,709	85,720
Հիմնական միջոցների մաշվածություն	123,978	105,190
Վնասներ` հանած օգուտներ հիմնական միջոցների օտարումից	-	376
Տոկոսային եկամուտ	(2,269)	-
Տոկոսային ծախս	12,181	12,506
Փոխարժեքային տարբերություններ	(7,272)	-
Ակտիվների արժեզրկում	4,234	-
	221,561	203,792
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր նախքան շրջանառու կապիտալի ճշգրտումները		
Տրամադրված կանխավճարների աճ	(54,199)	(9,687)
Պաշարների աճ	(62,976)	(1,882)
Կրեդիտորական պարտքերի աճ/(նվազում)	22,059	(196,726)
	126,445	(4,503)
Փոփոխություններ շրջանառու կապիտալում		
Ստացված տոկոսային եկամուտ	2,269	-
Գործառնական գործունեությունից ստացված/(գործառնական գործունեությամբ օգտագործված) զուտ դրամական միջոցներ	128,714	(4,503)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(148,417)	(263,010)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(3,326)	(5,737)
Ավանդի մարում	118,471	102,565
Ավանդի ներդրում	(73,122)	(115,956)
Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ	(106,394)	(282,138)
Դրամական միջոցների և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	22,320	(286,641)
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	7,794	-
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին	268,608	555,249
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	298,722	268,608

*Տես` Ծանոթագրություն 3, սխալի հետևանքով վերաներկայացման մանրամասների համար:

1 Ընդհանուր տեղեկություններ «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի և նրա գործունեության մասին

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան, «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի համար (այսուհետ՝ «Հիմնադրամ»): Հիմնադրամը հասարակական, շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հայաստանի Հանրապետության պետական ռեգիստրում գրանցման համարը՝ N 222.160.00131, գրանցման հասցեն՝ Հ. Քոչարի փ. 8, բն. 18-19, Երևան, Հայաստան:

Հիմնական գործունեությունը

Հիմնադրամի նպատակն է օգնել, աջակցել և հոգ տանել լքված և կարիքավոր երեխաների մասին՝ կառուցելով մանկական գյուղեր, սոցիալական կենտրոններ: Հիմնադրամի եկամտի հիմնական աղբյուրներն են SOS-Kinderdorf International-ի և այլ կազմակերպությունների նվիրատվությունները, հովանավորությունները և բնեղեն նպաստները:

Հայաստանի Հանրապետությունում «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամն իր գործունեությունն սկսել է 1988 թվականի Սպիտակի կործանարար երկրաշարժից անմիջապես հետո: Հիմնադրամը երեխայակենտրոն կազմակերպություն է, որի առաքելությունն է ապահովել կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների խնամքը՝ ընտանիքին մոտ պայմաններում: Ելնելով դրանից հիմնադրամն իր գործունեությունը ծավալում է երկու ուղղություններով՝ այլընտրանքային խնամքի ծառայություններ, ինչպես նաև ընտանիքների ամրապնդման ծառայություն՝ սոցիալական ծանր վիճակում գտնվող, անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքներին:

ՀՀ Կոտայքի մարզում 1990 թվականին ՍՕՍ Մանկական Գյուղ Կոտայքը բացեց իր դռներն այն երեխաների համար, ովքեր 1988 թվականի երկրաշարժի հետևանքով կորցրել էին իրենց ծնողներին: 1994 թվականին կառուցվեց ՍՕՍ Մանկապարտեզը, որի նպատակն էր ապահովել որակյալ նախադպրոցական կրթություն ՍՕՍ Մանկական Գյուղ Կոտայքի, ինչպես նաև հարակից համայնքների երեխաների համար: 2001 թվականին Երևանում հիմնադրվեց առաջին Երիտասարդական տունը, իսկ հետագա տարիների ընթացքում հիմնադրվեցին ևս երկու Երիտասարդական տներ, որտեղ խնամվում են Մանկական գյուղերից Երևան տեղափոխված 13-18 տարեկան երիտասարդները: ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքում 2009 թվականին բացվեց երկրորդ ՍՕՍ Մանկական Գյուղ Իջևանը:

Այժմ «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը գործունեություն է իրականացնում ՀՀ Կոտայքի և Տավուշի մարզերում, Երևան և Դիլիջան քաղաքներում՝ երեխաների շուրջօրյա խնամքի (կարճաժամկետ և երկարաժամկետ), Սոր և Մանկան կացարանի, ընտանիքների ամրապնդման ծրագրերի, ինչպես նաև ճգնաժամային արձագանքման ծրագրերի միջոցով: Հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերն ուղղված են Հայաստանի Հանրապետությունում երեխաների պաշտպանության համակարգի բարելավմանը, երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովմանը:

2019-2020թթ. ընթացքում Հիմնադրամն ունեցել է հետևյալ մշտական և ժամանակավոր կառուցվածքային միավորները:

Մշտական կառուցվածքային միավորները՝

Ծրագրային գրասենյակների գործունեության տարածքները հետևյալն են

1. Երկու մանկական գյուղեր (որտեղ բնակվում են 0-14 տարեկան երեխաներ)՝ Կոտայք գյուղում և Իջևան քաղաքում:
2. Երկու Երիտասարդական տներ (I-II) (որտեղ բնակվում են 14-18 տարեկան երեխաներ) և երկու կիսաանկախ բնակության փուլում գտնվող շահառուների համար նախատեսված երկու ծրագիր ծրագիր (մասամբ անկախ ծրագիր 18 տարեկանից բարձր ՍՕՍ-երեխաների համար, ովքեր աջակցություն են ստանում 2-3 տարվա ընթացքում)՝ Կոտայք գյուղում և Իջևան քաղաքում:
3. Ընտանիքների Ամրապնդման (ԸԱ) չորս ծրագրեր՝ Երևանի Քանաքեռ-Զեյթուն և Արաբկիր շրջաններում, Իջևանում և Կոտայքի մարզում:

1 Ընդհանուր տեղեկություններ «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի և նրա գործունեության մասին (շարունակություն)

Ժամանակավոր կառուցվածքային միավորները՝

1. Ընտանիքների Ամրապնդման շրջիկ Ծրագիր Տավուշի մարզում
2. Երիտասարդների զբաղունակություն և կայունություն Հայաստանում,
3. Սիրիահայերի աջակցություն,
4. Սկսած 2020թ.-ից՝ երկու ճգնաժամային արձագանքման ծրագրեր՝ «Լեռնային Ղարաբաղի հակամարտություն և COVID-19 արձագանքման ծրագիր»:

Նշված կառուցվածքային միավորների գործունեությունը համակարգում է Ազգային համակարգող գրասենյակը, որը նույնպես գտնվում է Երևանում:

2 Հիմնադրամի գործառնական միջավայրը

Հայաստանի Հանրապետություն. Հայաստանի Հանրապետության տնտեսությունը ցուցաբերում է զարգացող շուկաներին բնորոշ որոշակի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական դաշտը շարունակում է զարգանալ և ենթարկվել հաճախակի փոփոխությունների, ինչպես նաև կարող է ունենալ տարաբնույթ մեկնաբանումների: Հայաստանի Հանրապետության տնտեսական միջավայրի վրա էական ազդեցություն ունի Ռուսաստանի Դաշնությունում գործարար ակտիվության մակարդակը, և Ռուսաստանի Դաշնությունից դեպի Հայաստանի Հանրապետություն տեղի են ունենում դրամական միջոցների զգալի հոսքեր: Հետևաբար, տարածաշրջանում պահպանվող քաղաքական լարվածությունը, միջազգային պատժամիջոցները, արժեթղթերի շուկայի անկայունությունը և Ռուսաստանի Դաշնության առջև ծառայած այլ ռիսկերը կարող են բացասական ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական և կորպորատիվ ոլորտների վրա:

COVID-19. 2020թ. մարտին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը COVID-19-ի բռնկումը որակեց որպես համաշխարհային համավարակ: Ի պատասխան համավարակի՝ Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկվել են COVID-19-ի տարածման և ազդեցությանը զսպման ուղղված մի շարք միջոցառումներ, ինչպիսիք են՝ ճանապարհորդության արգելքները և սահմանափակումները, կարանտինները, ինքնամեկուսացումը, գործարար գործունեության սահմանափակումները, ընդհուպ ձեռնարկությունների փակումը: Այս միջոցառումները, ի թիվս այլոց, խիստ սահմանափակել են Հայաստանում տնտեսական գործունեությունը, բացասաբար են ազդել, և դեռևս անորոշ ժամանակով կարող են շարունակել բացասական ազդեցություն ունենալ Հիմնադրամի շահառուների, ինչպես նաև Հայաստանի և համաշխարհային տնտեսության վրա:

Դեկավարությունը անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում Հիմնադրամի գործունեության կայունությունն ապահովելու և իր շահառուներին և աշխատակիցներին աջակցելու ուղղությամբ.

- Օրական երկու անգամ կատարվում է դիմակների, ալկոհոլի տարածում և ջերմաչափում
- Աշխատակիցները, ովքեր ունեն ջերմություն և վատ ինքնազգացողություն, ուղարկվում են տուն/հիվանդանոց և նրանց թույլ չի տրվում վերադառնալ աշխատավայր՝ առանց ՊՇՌ թեստի բացասական արդյունքի: Բոլոր թեստերը կատարվել են Հիմնադրամի հաշվին.
- Բոլոր ստորաբաժանումներում պահպանվում է 1,5-2 մ սոցիալական հեռավորություն.
- Գործունեության շարունակականության ապահովում (բոլոր աշխատակիցները աշխատում են տնից հեռավար կարգով, և միայն անհրաժեշտության դեպքում են այցելում գրասենյակ):
- Տարածքի ախտահանումը կատարվում է օրական երկու անգամ (հաշվառումները պահվում են անվտանգության բաժնում)
- Յուրաքանչյուր ստորաբաժանման ներսում առկա են տեղեկատվական պաստառներ, որոնք հիշեցնում են աշխատակիցներին համավարակի ժամանակ ձեռնարկվող անհրաժեշտ անհրաժեշտ միջոցների մասին:

2 Հիմնադրամի գործառնական միջավայրը (շարունակություն)

Շահառուների համար իրականացվել են հետևյալ աջակցության գործողությունները.

- SOS մանկական գյուղերում ապրող ընտանիքները և բոլոր երեխաները հետևել են հակահամաճարակային բոլոր կանոններին և զգալիորեն կրճատվել է մարդկանց այցելությունը մարդաշատ վայրեր: Կրթական ծրագրերի մեծ մասն իրականացվել է հեռավար, կամ բացօթյա եղանակով: Համապատասխան տեխնիկական միջոցներ չունեցող շահառուներին Հիմնադրամը տրամադրել է հեռավար ուսուցման համար անհրաժեշտ բոլոր սարքավորումները (սոուլթբուքեր, ինտերնետի հասանելիություն):
- Համավարակի հետևանքով տուժած ընտանիքներին տրամադրվել են անհրաժեշտ սանիտարական, հակահամաճարակային պարագաներ, ինչպես նաև սնունդ և այլ անհրաժեշտ պարագաներ: Այս ընտանիքների անդամները, ովքեր կորցրել են իրենց աշխատանքը կամ եկամտի աղբյուրը, Հիմնադրամի միջոցներով ձեռք են բերել նոր մասնագիտություն:

Լեռնային Ղարաբաղի պատերազմը և դրա հետևանքները: Լեռնային Ղարաբաղում զինված հակամարտությունը սկսվեց 2020թ. սեպտեմբերին և շարունակվեց մինչև 2020թ. նոյեմբեր, երբ Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ղեկավարների կողմից ստորագրվեց համատեղ հայտարարություն: Հայտարարության համաձայն, Լեռնային Ղարաբաղի շրջաններից մի շարք տարածքներ փոխանցվեցին Ադրբեջանին, և ակնկալվում է տարածաշրջանում տնտեսական և տրանսպորտային կապերի ապաշրջափակում: Տնտեսական և տրանսպորտային կապերի ապաշրջափակման վերաբերյալ որոշումները ներկայումս մշակվում են փորձագիտական խմբերի կողմից: Այս բոլոր իրադարձություններն ու գործողությունները Էապես ազդում են Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա:

Հիմնադրամի գործունեությունը ընդլայնվել է, և ստացվել են նոր միջոցներ ճգնաժամային իրավիճակներին արձագանքելու համար: Այս միջոցները հիմնականում նախատեսված էին աջակցելու Հիմնադրամի այն շահառուներին, ովքեր Էապես տուժել են վերոնշյալ իրադարձություններից: Ներկայիս տնտեսական իրավիճակի և կառավարության ձեռնարկած միջոցառումների ապագա ազդեցությունները դժվար է կանխատեսել, և ղեկավարության ներկայիս ակնկալիքներն ու գնահատականները կարող են տարբերվել փաստացի արդյունքներից:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ

Պատրաստման հիմունքները. Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ») պահանջներին համապատասխան, սկզբնական արժեքի հիմունքով: Սույն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական սկզբունքները ներկայացված են ստորև:

ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար պահանջվում են հաշվապահական հաշվառման Էական գնահատումներ: Բացի այդ, Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ ղեկավարությանն անհրաժեշտ է առաջնորդվել իր դատողություններով: Այն ոլորտները, որոնք ենթադրում են դատողությունների կամ բարդության ավելի բարձր աստիճան, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատականները Էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են Ծանոթագրություն 4-ում:

Անընդհատության հիմունք. Ղեկավարության կողմից սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքով:

Արտարժույթի փոխարկում. Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը նրա հիմնական գործունեության իրականացման տնտեսական միջավայրի արժույթն է: Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը և ՀՀ ազգային արժույթն է՝ Հայաստանի Հանրապետության դրամը (ՀՀ դրամ): Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով: ՀՀ դրամով ներկայացված ողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մոտակա հազարի չափով:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ գործառնական արժույթից տարբեր արժույթներով գործարքները հաշվառվում են գործարքների ամսաթվերի դրությամբ Հայաստանի Կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքներով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամական հոդվածները փոխարկվում են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվետու ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքներով, որոնք 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն են. 1 ԱՄՆ դոլար = 522.59 ՀՀ դրամ, 1 եվրո = 641.11 ՀՀ դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1 ԱՄՆ դոլար = 479.70 ՀՀ դրամ և 1 եվրո = 537,26 դրամ): Ոչ դրամական հոդվածները չեն փոխարկվում և չափվում են սկզբնական արժեքով (փոխարկվում են՝ օգտագործելով գործարքի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքները): Դրամական հոդվածների մարման և փոխարկման արդյունքում առաջացող փոխարժեքային տարբերությունները ներառվում են տվյալ ժամանակաշրջանի ֆինանսական գործունեության մասին հաշվետվությունում:

Հիմնական միջոցներ. Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումը, եթե վերջինս պահանջվում է: Հիմնական միջոցները ներառում են կառուցման ընթացքում գտնվող ակտիվները, որոնք ապագայում օգտագործվելու են որպես հիմնական միջոցներ:

Հետագա ծախսերը համապատասխանաբար ընդգրկվում են ակտիվի հաշվեկշռային արժեքում կամ ճանաչվում են որպես առանձին ակտիվ, միայն այն ժամանակ, երբ հավանական է, որ հիմնական միջոցների համապատասխան միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Հիմնադրամ և վերջինիս արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Վերանորոգման և պահպանման գծով ընթացիկ ծախսումները ծախսագրվում են, երբ դրանք տեղի են ունենում: Հիմնական միջոցների միավորների խոշոր հիմնամասերի կամ բաղադրիչների փոխարինման ծախսումները կապիտալացվում են, իսկ փոխարինված մասը դուրս է գրվում:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում ղեկավարությունը գնահատում է, թե արդյոք առկա է հիմնական միջոցների արժեզրկման հատկանիշ: Եթե որևէ նման հատկանիշ գոյություն ունի, ղեկավարությունը գնահատում է փոխհատուցվող գումարը, որը որոշվում է որպես հետևյալ երկու արժեքներից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև հատուցվող գումարը, և արժեզրկումից կորուստը ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում: Նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում ակտիվի համար ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է (անհրաժեշտության դեպքում), եթե տեղի են ունեցել գնահատումներում փոփոխություններ, որոնք կիրառվել են՝ որոշելու համար ակտիվի օգտագործման արժեքը կամ իրական արժեքը՝ հանած օտարման համար անհրաժեշտ ծախսումները:

Հիմնական միջոցների օտարումից շահույթը կամ վնասը որոշվում է որպես դրանց իրացումից ստացված հասույթի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում է Ֆինանսական գործունեության մասին հաշվետվությունում:

Մաշվածություն. Հողի համար մաշվածություն չի հաշվարկվում: Հիմնական միջոցների այլ միավորների մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդի կիրառմամբ՝ բաշխելով դրանց սկզբնական արժեքը մինչև մնացորդային արժեքը՝ օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Տեսակը	Օգտակար ծառայության ժամկետը
Շենքեր և շինություններ	- 20 տարի
Փոխադրամիջոցներ	- 5 տարի
Գույք և կահավորանք	- 5 տարի
Համակարգչային տեխնիկա	- 2 տարի
Այլ	- 5 տարի

Ակտիվի մնացորդային արժեքն այն գնահատված գումարն է, որը Հիմնադրամը ներկա պահին կստանար ակտիվի օտարումից՝ հանած օտարման գնահատված ծախսումները, եթե ակտիվն արդեն լիներ դրա օգտակար ծառայության վերջում ակնկալվող տարիքի և վիճակի: Ակտիվների մնացորդային արժեքները և օգտակար ծառայության ժամկետները վերանայվում և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

**3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ
(շարունակություն)**

Ոչ նյութական ակտիվներ. Հիմնադրամի ոչ նյութական ակտիվները ունեն որոշելի օգտակար ծառայության ժամկետ և հիմնականում ներառում են կապիտալացվող համակարգչային ծրագրերը և լիցենզիաները:

Ձեռք բերված համակարգչային ծրագրերի լիցենզիաները կապիտալացվում են դրանց ձեռքբերման և օգտագործման համար անհրաժեշտ ծախսերի հիման վրա:

Ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդով իրենց օգտակար ծառայության ընթացքում:

Տեսակը

Ծրագրային լիցենզիաներ

Օգտակար ծառայության

Ժամկետը

10 տարի

Արժեզրկման դեպքում նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև օգտագործման արժեք կամ իրական արժեք՝ հանած օտարման ծախսերը՝ կախված նրանից, թե այդ մեծություններից որն է ավելի ցածր:

Ֆինանսական գործիքներ. հիմնական չափման մոտեցումները: Իրական արժեքը այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության դիմաց, շուկայի մասնակիցների միջև բնականոն գործարքի արդյունքում: Իրական արժեքի ամենաարժանահավատ վկայությունն է հանդիսանում ակտիվ շուկայում գնանշվող գինը: Ակտիվ շուկան այն շուկան է, որում շարունակական հիմունքով տեղի են ունենում ակտիվի կամ պարտավորության հետ կապված գործարքները՝ անհրաժեշտ գնային տեղեկատվություն ապահովելու համար բավարար հաճախականությամբ և ծավալով:

Ակտիվ շուկայում շրջանառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը չափվում է որպես առանձին ակտիվի կամ պարտավորության գնանշվող շուկայական գնի և ընկերության կողմից պահվող գործիքների քանակության արտադրյալ: Նշվածը տեղի է ունենում նույնիսկ այն դեպքում, երբ շուկայի սովորական օրական առքուվաճառքի ծավալը բավարար չէ այդ քանակությունը կլանելու համար, և մեկ գործարքում դիրքը վաճառելու հայտի ներկայացումը կարող է ազդել գնանշվող գնի վրա:

Գնահատման մեթոդները, ինչպիսիք են զեղչված դրամական հոսքերի մոդելները կամ վերջերս կատարված «պարզած ձեռքի հեռավորության գործարքները» կամ ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությունների ֆինանսական տվյալների ստացման վրա հիմնված մոդելները, օգտագործվում են՝ որոշելու այն ֆինանսական գործիքների իրական արժեքը, որոնց համար արտաքին շուկայական գնանշման տեղեկատվությունը հասանելի չէ:

Գործարքի հետ կապված ծախսումները լրացուցիչ ծախսումներն են, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական գործիքի ձեռքբերմանը, թողարկմանը կամ օտարմանը: Լրացուցիչ ծախսումն այն ծախսումն է, որը կազմակերպությունը չէր կրի, եթե գործարքը տեղի չունենար: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են գործակալներին (ներառյալ՝ որպես վաճառքի գործակալ հանդես եկող աշխատակիցներին), խորհրդատուներին, միջնորդներին, դիլերներին վճարված միջնորդավճարները և կոմիսիոն վճարները, կարգավորող մարմինների և արժեթղթերի փոխանակման գործակալությունների կողմից գանձումները, սեփականության իրավունքի փոխանցման հետ կապված հարկերը և վճարները: Գործարքի հետ կապված ծախսումները չեն ներառում պարտատոմսերի հավելավճարները և զեղչերը, ֆինանսական ծախսերը, ներքին վարչական կամ պահպանման ծախսերը:

Ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական գործիքը գնահատվել է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած հաշվեզրված տոկոսները և ֆինանսական ակտիվների համար՝ հանած ակնկալվող պարտքային կորուստների գծով ցանկացած նվազեցում: Հաշվեզրված տոկոսները ներառում են սկզբնական ճանաչման ժամանակ գործարքի հետ կապված հետաձգված ծախսումների և հավելավճարի կամ զեղչի ամորտիզացիան՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաշվեզրված տոկոսային եկամուտը և հաշվեզրված տոկոսային ծախսը, ներառյալ հաշվեզրված արժեկտրոնը և ամորտիզացված զեղչը կամ հավելավճարը (ներառյալ՝ առաջացման պահին հետաձգված վճարները, եթե կան այդպիսիք) առանձին չեն ներկայացվում և ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության համապատասխան հոդվածի հաշվեկշռային արժեքում:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային եկամտի կամ տոկոսային ծախսի բաշխման այնպիսի մեթոդ է, որը հանգեցնում է հաշվեկշռային արժեքի նկատմամբ կիրառվող հաստատուն պարբերական տոկոսադրույքի (արդյունավետ տոկոսադրույք):

Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ համապատասխան դեպքերում ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները (չներառելով ապագա պարտքային կորուստները) գեղչում է ճշգրիտ մինչև ֆինանսական գործիքի գուտ հաշվեկշռային արժեքը: Արդյունավետ տոկոսադրույքը գեղչում է փոփոխական տոկոսադրույք ունեցող գործիքների դրամական միջոցների հոսքերը մինչև հաջորդ տոկոսադրույքի վերագնանշման ամսաթիվը, բացառությամբ այն պարզալծարի կամ գեղչի, որն արտացոլում է գործիքում սահմանված լողացող տոկոսադրույքի կամ շուկայական դրույքներով չսահմանված այլ փոփոխականների նկատմամբ վարկային սփրեղը: Այդպիսի պարզալծարները կամ գեղչերն ամորտիզացվում են գործիքի ողջ գործողության ակնկալվող ժամանակահատվածի ընթացքում: Ներկա արժեքի հաշվարկումը ներառում է պայմանագրի կողմերի միջև վճարված կամ ստացված բոլոր վճարները, որոնք արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասն են կազմում:

Ֆինանսական գործիքներ, սկզբնական ճանաչում. Բոլոր ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ ճշգրտված գործարքի հետ կապված ծախսումներով: Սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքի լավագույն վկայությունն է գործարքի գինը:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. Գնահատման կատեգորիաները. Հիմնադրամը ֆինանսական ակտիվները դասակարգում է ամորտիզացված արժեքով: Պարտքային ֆինանսական ակտիվների դասակարգումը և հետագա չափումը կախված է. (i) հարակից ակտիվների պորտֆելը կառավարելու համար Հիմնադրամի կողմից կիրառվող բիզնես մոդելից և (ii) ակտիվի դրամական միջոցների հոսքերի բնութագրերից:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. Բիզնես մոդել: Բիզնես մոդելն արտացոլում է այն մեթոդը, որի միջոցով Հիմնադրամը կառավարում է իր ակտիվները՝ դրամական հոսքերի հավաքագրման նպատակով. արդյո՞ք Հիմնադրամի նպատակն է՝ (i) ակտիվներից հավաքագրել բացառապես պայմանագրային դրամական միջոցների հոսքերը («ակտիվների պահում պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով»), թե (ii) ակտիվներից հավաքագրել և՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը, և՛ ակտիվների վաճառքից առաջացող դրամական միջոցների հոսքերը («ակտիվների պահում պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման և վաճառքի նպատակով»), կամ, եթե (i) կամ (ii) պարբերությունները կիրառելի չեն, ֆինանսական ակտիվները դասակարգվում են «այլ» բիզնես մոդելի և չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվներ, դասակարգում և հետագա չափում. դրամական միջոցների հոսքերի բնութագրերը. Եթե բիզնես մոդելը նախատեսում է ակտիվների պահում պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի ստացման կամ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի և վաճառքի համար, ապա Հիմնադրամը գնահատում է, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և տոկոսի վճարումներ: Պարունակվող ածանցյալ գործիքներով ֆինանսական ակտիվները դիտարկվում են ամբողջ ծավալով՝ որոշելու, թե արդյոք նրանց դրամական միջոցների հոսքերը համապատասխանում են միայն մայր գումարի և տոկոսի վճարումների հատկանիշներին: Նման գնահատումն իրականացնելիս՝ Հիմնադրամը հաշվի է առնում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը համապատասխանում են բազային վարկային համաձայնագրին, այսինքն՝ տոկոսները ներառում են միայն վարկային ռիսկը, փողի ժամանակային արժեքը, այլ բազային վարկային ռիսկերը և շահույթի մարժան:

Միայն մայր գումարի և տոկոսի վճարումների գնահատումը կատարվում է ակտիվի սկզբնական ճանաչման ժամանակ և հետագայում այն չի վերանայվում:

Ֆինանսական ակտիվներ, վերադասակարգում: Ֆինանսական գործիքները վերադասակարգվում են միայն այն դեպքում, երբ փոխվում է պորտֆելի ընդհանուր կառավարման բիզնես մոդելը: Վերադասակարգումն ունի առաջընթաց ազդեցություն և տեղի է ունենում բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի սկզբից:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների արժեզրկում. ակնկալվող պարտքային կորուստների գնահատված պահուստ. Հիմնադրամը կանխատեսում է հիմունքով գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքների գծով հնարավոր ակնկալվող պարտքային կորուստները: Հիմնադրամը գնահատում է պարտքային գործիքների հետ կապված ակնկալվող պարտքային կորուստը և ճանաչում է կորստի պահուստը հաշվետու յուրաքանչյուր ամսաթվի դրությամբ:

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատումը արտացոլում է. i) անաչառ և հավանականությամբ կշռված գումարը, որը որոշվում է հնարավոր արդյունքների տիրույթի գնահատման միջոցով. (ii) փողի արժեքը ժամանակի մեջ, և (iii) անցյալ իրադարձությունների, ընթացիկ պայմանների և կանխատեսվող ապագա տնտեսական պայմանների վերաբերյալ որոշ հիմնավոր և հավաստի տեղեկությունները, որոնք հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի են առանց անհարկի միջոցների և ռեսուրսների ծախսման:

Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են՝ նվազեցված ակնկալվող պարտքային կորուստի պահուստի չափով:

Հիմնադրամը կիրառում է պարզեցված մոտեցում դեբիտորական պարտքերի և բանկերում պահվող ավանդների արժեզրկման նպատակով:

Ֆինանսական ակտիվներ. դուրսագրում. Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասամբ դուրս են գրվում այն ժամանակ, երբ Հիմնադրամը սպառել է դրանց վերականգնման բոլոր գործնական հնարավորությունները և եզրակացրել է, որ չկան այդպիսի ակտիվների վերականգնման հիմնավորված ակնկալիքներ: Դուրսագրումն իրենից ներկայացնում է ակտիվի ապաճանաչում: Հիմնադրամը կարող է դուրս գրել դեռևս հարկադիր բռնագանձման գործընթացում գտնվող ֆինանսական ակտիվները, այն դեպքում, երբ Հիմնադրամը փորձում է բռնագանձել պայմանագրային պարտավորության գումարները՝ առանց վերականգնման ողջամիտ ակնկալիքի:

Ֆինանսական ակտիվներ. ապաճանաչում. Հիմնադրամը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ. (ա) ակտիվը մարվել է կամ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը կամ (բ) Հիմնադրամը փոխանցել է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի նկատմամբ իրավունքները կամ կնքել է ակտիվների փոխանցման պայմանագիր, միաժամանակ (i) փոխանցելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները կամ (ii) չփոխանցելով և նաև չպահպանելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները, սակայն չպահպանելով նաև ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Վերահսկողությունը պահպանվում է, եթե գործարքի կողմը չունի գործնական հնարավորություն՝ ակտիվը ամբողջությամբ վաճառելու ոչ կապակցված երրորդ կողմին՝ առանց վաճառքի լրացուցիչ սահմանափակումներ սահմանելու անհրաժեշտության:

Ֆինանսական պարտավորություններ. չափման կատեգորիաները. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես հետագայում ամորտիզացված արժեքով չափվող:

Ֆինանսական պարտավորություններ. ապաճանաչում: Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են: Պարտավորությունների փոփոխությունները, որոնք չեն հանգեցնում մարման, հաշվառվում են որպես գնահատման փոփոխություն՝ օգտագործելով կուտակային փոխհատուցման մեթոդը, ցանկացած օգուտ կամ վնաս ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվեկշռային արժեքների տարբերության տնտեսական եռությունը վերագրվում է սեփականատերերի հետ կապիտալ բնույթի գործարքի:

Ֆինանսական գործիքների հաշվանցում: Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և գուտ գումարը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ առկա է ճանաչված գումարները հաշվանցելու համար իրավաբանորեն ամրագրված իրավունք և կա մտադրություն կամ մարելու գուտ արժեքը, կամ էլ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը: Դիտարկվող հաշվանցման իրավունքը (ա) չպետք է կախված լինի ապագա իրադարձությունից և (բ) պետք է իրավաբանական ուժ ունենա բոլոր հետևյալ հանգամանքներում՝ (i) բնականոն գործունեության ընթացքում, (ii) դեֆոլտի դեպքում և (iii) անվճարունակության կամ սնանկության դեպքում:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ. Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են առձեռն դրամական միջոցները, բանկերում պահվող ցպահանջ ավանդները և այլ կարճաժամկետ բարձր իրացվելիություն ունեցող ներդրումները՝ երեք ամիս կամ դրանից պակաս սկզբնական մարման ժամկետով: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, քանի որ (i) դրանք պահվում են պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով, և այդ դրամական միջոցների հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և տոկոսագումարի վճարում, և (ii) դրանք չեն որոշված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը հաշվեգրվում են, երբ գործընկերը կատարում է պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները, և սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Պաշարներ. Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Պաշարների՝ արտադրության նպատակով բացթողման և այլ դուրսգրման դեպքում, դրանց չափումը կատարվում է «առաջինը մուտք, առաջինը ելք» սկզբունքով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

Տրամադրված կանխավճարներ. Տրամադրված կանխավճարները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեքրկման համար պահուստը: Ակտիվներ ձեռք բերելու գծով տրամադրված կանխավճարները փոխանցվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ Հիմնադրամը ստանում է ակտիվի նկատմամբ վերահսկողություն և հավանական է, որ ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Հիմնադրամ: Այլ կանխավճարները ծախսագրվում են ֆինանսական գործունեության մասին հաշվետվությունում այն ժամանակ, երբ կանխավճարի հետ կապված ապրանքը կամ ծառայությունը ստացվում է: Եթե կա այնպիսի հայտանիշ, որ կանխավճարին վերաբերող ակտիվները, ապրանքները կամ ծառայությունները չեն ստացվի, ապա կանխավճարի հաշվեկշռային արժեքը համապատասխանաբար դուրս է գրվում և արժեքրկումից կորուստը ճանաչվում է տարվա ֆինանսական գործունեության մասին հաշվետվությունում:

Տրամադրված կանխավճարները ներառում են բիզնես դրամաշնորհներ՝ տրամադրված սկսնակ բիզնես ունեցող շահառուներին: Այդ գումարները վճարման պահին ճանաչվում են որպես կանխավճար, քանի որ բիզնեսը պետք է հիմնադրված և հաշվետու լինի Հիմնադրամին պայմանագրի ստորագրումից հետո վեց ամսվա ընթացքում: Հաշվետվությունն ստանալուն պես այդ գումարները ճանաչվում են որպես ծախս:

Պարտավորությունների և վճարների գծով պահուստ: Պարտավորությունների և վճարների գծով պահուստները անորոշ ժամկետով կամ գումարով ոչ ֆինանսական պարտավորություններ են: Դրանք հաշվեգրվում են այն ժամանակ, երբ անցյալ դեպքերի արդյունքում Հիմնադրամն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտավորություն, և հավանական է, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող ռեսուրսների արտահոսք, և պարտավորությունը հնարավոր է արժանահավատորեն չափել: Պահուստները չափվում են պարտավորության մարման համար ակնկալվող անհրաժեշտ ծախսերի ներկա արժեքով, օգտագործելով առանց ռիսկի դրույքաչափը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և պարտավորությանը բնորոշ ռիսկերը: Ժամանակի ընթացքում պահուստի աճը ճանաչվում է որպես տոկոսային ծախս՝ ֆինանսական ծախսերի կազմում:

Տուրքերը և վճարները, ինչպիսիք են, օրինակ, շահութահարկից բացի այլ հարկերը կամ կանոնակարգային վճարները, որոնք հիմնված են վճարման պարտավորության առաջացմանը նախորդող ժամանակահատվածի տեղեկատվության վրա, ճանաչվում են որպես պարտավորություն, երբ տեղի է ունենում օրենսդրությամբ սահմանված կարգով տուրքի վճարում առաջացնող պարտավորեցնող դեպք, որն առաջ է բերում տուրք վճարելու պարտավորություն: Եթե տուրքի վճարումը կատարվել է մինչև պարտավորեցնող դեպքը տեղի ունենալը, այն ճանաչվում է որպես կանխավճար:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Դրամական նվիրատվությունների գծով պարտավորություններ շահառուներին. ՍՕՍ մանկական գյուղեր միջազգային կազմակերպությունն իրականացնում է Միջազգային հովանավորչական ծրագիրը: Այս ծրագրի շրջանակներում տարբեր երկրների հովանավորներ պարտավոր են վճարել հովանավորչական հատկացումներ, որոնք նախատեսված են հովանավորման վայրում գտնվող ՍՕՍ մանկական գյուղի (ներառյալ ՍՕՍ ընտանեկան խնամքի և բոլոր այլ միավորների) ընթացիկ ծախսերը հոգալու համար: Բացի հովանավորչական հատկացումներից, հովանավորների կողմից կազմակերպությանն ուղղված ոչ պարտադիր նվիրատվություններ են երեխայի դրամական նվերները, որոնք նախատեսված են կոնկրետ երեխայի համար օգտագործվելու նպատակով:

Դրամական նվիրատվությունների գծով պարտավորություններ. իրենցից ներկայացնում են Հիմնադրամին պահառության տրամադրված կանխավճարներ, որոնք հետագայում կօգտագործվեն որոշակի նպատակով: Հիմնադրամը հանդես է գալիս որպես հոգաբարձու և շահառու չի հանդիսանում: Երեխաների դրամական նվերները պահվում են կոլեկտիվ բանկային ավանդում և ընթացիկ հաշիվներում և յուրաքանչյուր երեխայի համար պահվում է անհատական դրամական նվերների հաշվառում: Դրամական նվերները նախատեսված են ՍՕՍ մանկական գյուղում հյուրընկալված առանձին երեխաների համար:

Ստացված դրամաշնորհներ և եկամուտ նվիրատվություններից. Ստացված դրամաշնորհները ճանաչվում են իրենց իրական արժեքով, երբ կա ողջամիտ երաշխիք, որ դրամաշնորհը կստացվի, և Հիմնադրամը կկատարի բոլոր հարակից պայմանները:

Հիմնական միջոցների ձեռքբերմանն առնչվող դրամաշնորհները ներառվում են ոչ ընթացիկ պարտավորություններում՝ որպես հետաձգված եկամուտ և ներառվում են շահույթում կամ վնասում գծային հիմունքով՝ համապատասխան ակտիվների ակնկալվող օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ծախսերին վերաբերող դրամաշնորհները հետաձգվում և ճանաչվում են տարվա շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանի ընթացքում, որն անհրաժեշտ է՝ դրանք փոխհատուցելու համար նախատեսված ծախսերին համապատասխանեցնելու նպատակով:

Պարտավորություններ շահառուների նկատմամբ.

ՍՕՍ-Բնակարանային ծրագրի շահառուներ.

Հիմնադրամն իրականացնում է վաղ երիտասարդ տարիքում իր խնամքի տակ գտնվող երեխաներին բնակարանով ապահովելու ծրագիր: Ծրագիրը հասանելի է երեխաների համար ինչպես Հիմնադրամի կողմից նրանց խնամքի տակ գտնվելու ժամանակահատվածում, այնպես էլ այդ ժամանակահատվածից հետո ցանկացած ժամանակաշրջանում (այսինքն՝ Հիմնադրամի շրջանավարտների համար): Ծրագրի իրականացումը ենթադրում է երիտասարդների և հիմնադրամի համաֆինանսավորմամբ բնակելի տարածքների ձեռքբերում: Հիմնադրամը վճարում է բնակելի տարածքի արժեքի 70%-ից ոչ ավելի, իսկ մնացածը վճարում է երիտասարդը: Ծրագրի ներքո չեն նախատեսված որևէ միջոցներ ծրագրի համար որպես ամբողջություն կամ յուրաքանչյուր տարվա համար, հետևաբար դա Հիմնադրամի համար որևէ իրավական պարտավորություն չի ստեղծում: Բնակելի տարածք ձեռք բերելու յուրաքանչյուր որոշում կայացվում է Հիմնադրամի ղեկավարության կողմից. նման որոշումները հիմնված են մի քանի գործոնների վրա, ներառյալ միջոցների առկայությունը (ինչպես ստացողից, այնպես էլ Հիմնադրամից), ստացողի համար բնակելի տարածքի անհրաժեշտության հիմնավորված փաստը, ընտրված բնակելի տարածքների համապատասխանության ապահովումը ծրագրի կողմից նախատեսված սահմանների և կանոնների հետ: Ծրագրի իրականացման համար Հիմնադրամը սովորաբար յուրաքանչյուր տարվա համար նախատեսում է 5,000 հազար ՀՀ դրամ բյուջե: Եթե ձեռքբերումը չի կատարվել մեկ տարվա ընթացքում կամ կատարվել է բյուջեով նախատեսված գումարից պակաս գումարով, ապա խնայողությունները կարող են օգտագործվել հաջորդ տարիներին մյուս երիտասարդ շահառուին բնակարանով ապահովելու համար: Մեկ բնակելի տարածքի ձեռքբերման ուղղությամբ Հիմնադրամի ներդրումը չի կարող գերազանցել 5000 հազար ՀՀ դրամը: Երիտասարդները սովորաբար իրենց ներդրումները կուտակում են Հիմնադրամում, որն էլ իր հերթին միջոցները դնում է առանձին բանկային հաշվի վրա: Երիտասարդների կողմից կուտակված միջոցները հիմնականում գոյանում են Հիմնադրամի կողմից նրանց ամենօրյա ծախսերի համար տրամադրվող ֆինանսական օգնության միջոցների խնայումներից: Երիտասարդները կարող են ծրագրի համար միջոցներ կուտակել նաև Հիմնադրամից դուրս:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Ելնելով ծրագրի պայմաններից՝ Հիմնադրամը չունի որևէ իրավական կամ կառուցողական պարտավորություն երիտասարդների նկատմամբ և իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում համապատասխան պարտավորությունները արտացոլում է երիտասարդներից ծրագրային նպատակներով փաստացի դրամական մուտքերի չափով, մինչև այն ժամանակ, երբ այդ միջոցները ծախսվեն բնակելի տարածքների ձեռքբերման նպատակով:

Երեխայի նպաստի խնայողություններ

Սրանք այն միջոցների խնայողություններն են, որոնք Հիմնադրամը տրամադրում է Հիմնադրամի խնամքի ներքո գտնվող երիտասարդներին իրենց ամենօրյա ծախսերի համար: Այս գումարները պահվում են յուրաքանչյուր երիտասարդի անձնական քարտում որպես պարտավորություն, որը ենթակա է վճարման նրանց ըստ պահանջի:

Աշխատակիցների հատուցումներ. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներն այն հատուցումներն են, որոնք ակնկալվում է ամբողջությամբ մարել աշխատակիցների կողմից համապատասխան ծառայությունների մատուցման տարեկան հաշվետու ժամանակաշրջանի ավարտին հաջորդող տասներկու ամսվա ընթացքում և ներառում են.

- օրավարձեր, աշխատավարձեր և պարգևավճարներ.
- վճարովի տարեկան արձակուրդներ և վճարովի անաշխատունակության նպաստներ.

Երբ աշխատակիցները ծառայություններ են մատուցում Հիմնադրամին հաշվետու ժամանակահատվածում, Հիմնադրամը ճանաչում է աշխատողների կարճաժամկետ հատուցումների չգեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց.

- որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ հանած արդեն վճարված ցանկացած գումար: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է նպաստների չգեղչված գումարը, Հիմնադրամը այդ ավելցուկը ճանաչում է որպես ակտիվ (կանխավճարված ծախս), այնքանով, որքանով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատմանը կամ դրամական միջոցների վերադարձմանը:
- որպես ծախս, եթե գումարը ներառված չէ ակտիվի ինքնարժեքում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների վճարման ակնկալվող արժեքը ճանաչվում է այն ժամանակ, երբ և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտավորություն՝ նման վճարումներ կատարելու անցյալ իրադարձությունների արդյունքում, և պարտավորությունը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ներկա պարտավորություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը չունի վճարումները կատարելու այլ իրատեսական այլընտրանք:

Հետաշխատանքային հատուցումներ

Կենսաթոշակային պարտավորությունների ներկա արժեքը կախված է մի շարք գործոններից, որոնք որոշվում են ակտուարային հիմունքներով՝ օգտագործելով մի շարք ենթադրություններ: Կենսաթոշակների գույք արժեքը (եկամուտը) որոշելու համար օգտագործվող ենթադրությունները ներառում են գեղջման դրույքաչափը: Այս ենթադրությունների ցանկացած փոփոխություն կազդի կենսաթոշակային պարտավորությունների հաշվեկշռային արժեքի վրա:

Հիմնադրամը յուրաքանչյուր տարվա վերջում սահմանում է համապատասխան գեղջի դրույքաչափը: Սա այն տոկոսադրույքն է, որը պետք է օգտագործվի՝ որոշելու ապագա դրամական միջոցների գնահատված արտահոսքերի ներկա արժեքը, որոնք ակնկալվում են, որ կպահանջվեն կենսաթոշակային պարտավորությունները մարելու համար: Համապատասխան գեղջի դրույքաչափը որոշելիս Հիմնադրամը հաշվի է առնում բարձրորակ կորպորատիվ պարտատոմսերի տոկոսադրույքները՝ արտահայտված այն արժույթով, որով վճարվելու են հատուցումները և ունեն մարման ժամկետներ, որոնք մոտ են համապատասխան կենսաթոշակային պարտավորության ժամկետներին:

Կենսաթոշակային պարտավորությունների գծով այլ հիմնական ենթադրությունները մասամբ հիմնված են ընթացիկ շուկայական պայմանների վրա:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Հիմնադրամի սահմանված հատուցումների պլանների համաձայն՝ կենսաթոշակային նպաստի չափը, որը աշխատողը կստանա կենսաթոշակի անցնելու ժամանակ, սահմանվում է՝ հաշվի առնելով աշխատողի ստաժը և վերջնական աշխատավարձը: Ցանկացած հատուցումների իրավական պարտավորությունը մնում է Հիմնադրամի վրա, նույնիսկ եթե սահմանված հատուցումների պլանի ֆինանսավորման համար նախատեսված են համապատասխան պլանային ակտիվներ: Պլանային ակտիվները կարող են ներառել ակտիվներ, որոնք հատուկ նշանակված են երկարաժամկետ նպաստների հիմնադրամին, ինչպես նաև որակավորվող ապահովագրական պոլիսներ: Սահմանված հատուցումների պլանների ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված պարտավորությունը հաշվետու ամսաթվի դրությամբ սահմանված հատուցումների պարտավորության (ՍՀՊ) ներկա արժեքն է՝ հանած պլանային ակտիվների իրական արժեքը: Ղեկավարությունը տարեկան գնահատում է ՍՀՊ-ն անկախ ակտուարների օգնությամբ: Այն հիմնված է գնահի, աշխատավարձի աճի և մահացության ստանդարտ տեմպերի վրա: Չեղյան գործակիցները որոշվում են յուրաքանչյուր տարվա վերջի մոտ՝ հղում անելով միջնաժամկետ պետական պարտատոմսերին, որոնք արտահայտված են արժույթով, որով վճարվելու են հատուցումները և ունեն մարման ժամկետներ, որոնք մոտ են համապատասխան կենսաթոշակային պարտավորության ժամկետներին: Հիմնադրամի սահմանված հատուցումների պլանի ծառայությունների արժեքը ներառված է աշխատակիցների հատուցումների ծախսում: Աշխատակիցների վճարումները, որոնք բոլորն էլ անկախ են աշխատանքային ստաժի տևողությունից, դիտվում են որպես ծառայության արժեքի նվազեցում: Սահմանված հատուցումների զուտ պարտավորության գծով զուտ տոկոսային ծախսերը ներառված են ֆինանսական ծախսերում: Սահմանված հատուցումների զուտ պարտավորության վերաչափումներից առաջացող օգուտները և վնասները ներառված են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և չեն վերադասակարգվում հետագա ժամանակաշրջաններում կուտակված արդյունքների մեջ:

Սխալների ուղղում. Տարվա ընթացքում Հիմնադրամը ուղղում է կատարել սույն ֆինանսական հաշվետվություններում 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա և 2019թ. հունվարի 1 համար ներկայացված համապատասխան հաշվետվությունների համեմատությամբ: 2019թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվետվությունը ավելացվել է երրորդ հաշվեկշռի վրա սխալի ազդեցության պատճառով: Համաձայն ՀՀՄՍ 8-ի, փոփոխությունները կատարվել են հետընթաց կերպով, և համեմատական թվերը համապատասխանաբար ճշգրտվել են:

Նախկինում հրապարակված ֆինանսական հաշվետվությունների ուղղումները.

Ուղղում 1. 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններում այն հիմնական միջոցները, որոնք պատրաստ էին օգտագործման 2019թ. տարեվերջին, ներկայացվել են որպես «Կառուցման ընթացքում գտնվող նախագծեր»՝ հիմնական միջոցներից առանձին: Հիմնադրամը ընթացիկ ֆինանսական հաշվետվություններում այս գույքի արժեքը տեղափոխել է «Հիմնական միջոցներ»:

Ուղղում 2. Հիմնադրամը մի քանի տարիների ընթացքում չի վերագնահատել հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորությունների գումարները և այս ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում իրականացրել է 2020թ. դեկտեմբերի 31-ի, 2019թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. հունվարի 1-ի դրությամբ հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորությունների գնահատում: Հիմնադրամը ակտուարային հաշվարկների հիման վրա ճշգրտել է պարտավորությունների չափը 2019թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. հունվարի 1-ի դրությամբ: Ըստ ակտուարային հաշվետվության, կենսաթոշակային պարտավորությունների ընդհանուր գումարները 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 170,045 հազար ՀՀ դրամ (2019թ. հունվարի 1-ին՝ 166,115 հազար ՀՀ դրամ):

Ուղղում 3. 2019թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. հունվարի 1-ի դրությամբ երեք ամսից ավելի սկզբնական մարման ժամկետով բանկային ավանդները ներկայացվել են որպես «Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ»: Հիմնադրամը նման մնացորդները վերադասակարգել է որպես «Բանկերում պահվող ավանդներ»:

Ուղղում 4. Նախկինում երկարաժամկետ պարտավորությունների կարճաժամկետ մասը ներկայացվել է երկարաժամկետ պարտավորությունների հետ միասին: Հիմնադրամը կատարել է ուղղում և կարճաժամկետ պարտավորությունները ներկայացրել երկարաժամկետ պարտավորություններից առանձնացված կերպով: Բացի այդ, հետաշխատանքային հատուցումների պարտավորությունները առանձնացվել են այլ ոչ ընթացիկ պարտավորություններից:

**3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ
(շարունակություն)**

Ուղղում 5. Հիմնադրամը 2019թ. իրականացրել է հիմնական միջոցների օտարում: Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար հիմնական միջոցների օտարումները ներկայացված են առանձին երկու տողով՝ օտարված միավորների համախառն հաշվեկշռային արժեքի և նույն օտարված միավորների գծով կուտակված մաշվածության համար: Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս նշված գումարները ներկայացվել են զուտ և արտացոլվել են մեկ տողով՝ «Վնասներ՝ հանած հիմնական միջոցների օտարումից օգուտները»: Ուղղումը ազդում է միայն դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության վրա:

**«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Սխալների ուղղման ազդեցությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում եղել է հետևյալը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Սկզբնական ներկայացմամբ	Ուղղում 1	Ուղղում 2	Ուղղում 3	Ուղղում 4	Վերաներկայացված 2019թ. դեկտեմբերի 31-ի համար
ԱԿՏԻՎՆԵՐ						
Հիմնական միջոցներ	666,641	197,223	-	-	-	863,864
Կառուցման ընթացքում գտնվող ծրագրեր	197,223	(197,223)	-	-	-	-
Բանկերում պահվող ավանդներ	-	-	-	117,305	-	117,305
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	385,913	-	-	(117,305)	-	268,608
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՉՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ						
Դրամական նվիրատվությունների գծով պարտավորություններ շահառուներին	90,043	-	-	-	(60,134)	29,909
Հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորություններ	-	-	159,688	-	-	159,688
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	96,188	-	(53,875)	-	(42,313)	-
ԸՆԴԱՄԵՆՆԸ Ո՛Յ ԸՆԹԱԳԻԿ պարտավորություններ	186,231	-	105,813	-	(102,447)	189,597
Դրամական նվիրատվությունների գծով պարտավորություններ շահառուներին	-	-	-	-	60,134	60,134
Հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորություններ	-	-	10,357	-	-	10,357
Հաշվեգրված ծախսեր և այլ պարտավորություններ	-	-	-	-	42,313	42,313
ԸՆԴԱՄԵՆՆԸ ԸՆԹԱԳԻԿ պարտավորություններ	142,830	-	10,357	-	102,447	255,634
Կուտակված արդյունք	977,586	-	(97,193)	-	-	880,393
Ակտուարային օգուտ/վնաս	-	-	(18,977)	-	-	(18,977)
Զուտ ակտիվներ	977,586	-	(116,170)	-	-	861,416

**«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Միավների ուղղման ազդեցությունը ֆինանսական գործունեության մասին հաշվետվությունում եղել է հետևյալը 2019թ. դեկտեմբերի 31-ի համար

Հազ. ՀՀ դրամ	Սկզբնական ներկայացմամբ	Ուղղում 2	Վերաներկայացված 2019թ. դեկտեմբերի 31-ի համար
Ծրագրի/նախագծի ծախսեր	(1,228,534)		(3,123)
Տոկոսային ծախսեր	-		(12,506)

Միավների ուղղման ազդեցությունը դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում եղել է հետևյալը 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար.

Հազ. ՀՀ դրամ	Սկզբնական ներկայացմամբ	Ուղղում 2	Ուղղում 3	Ուղղում 5	Վերաներկայացված 2019թ. դեկտեմբերի 31-ի համար
Տարվա արդյունք նախքան հարկումը	101,349	(15,629)	-	-	85,720
Հիմնական միջոցների օտարում*	69,261	-	-	(69,261)	-
Օտարված հիմնական միջոցի մաշվածություն*	(68,885)	-	-	68,885	-
Վնասներ՝ հանած հիմնական միջոցների օտարումից օգուտներ	-	-	-	376	376
Ֆինանսական ծախս	-	12,506	-	-	12,506
Կրեդիտորական պարտքի աճ/(նվազում)	(199,849)	3,123	-	-	(196,726)
Գործառնական գործունեությունից ստացված/(գործառնական գործունեությամբ օգտագործված) զուտ դրամական միջոցներ	128,714	-	-	-	128,714
Ավանդի մարում	-	-	115,956	-	115,956
Ավանդի ներդրում	-	-	(129,347)	-	(129,347)
Ներդրումային գործունեությունից ստացված/(Ներդրումային գործունեությամբ օգտագործված) զուտ դրամական միջոցներ	(268,747)	-	(13,391)	-	(282,684)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին	658,617	-	(103,368)	-	555,249
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին	385,913	-	(117,305)	-	268,608

*Այս տողերը հանվել են, քանի որ ուղղման արդյունքում չեն ներառվել Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում: Նշված գումարները ներկայացվել են զուտ և արտացոլվել են մեկ տողով՝ «Վնասներ՝ հանած հիմնական միջոցների օտարումից օգուտներ»:

**«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Սխալների ուղղման ազդեցությունը ֆինանսական վիճակի մասին մասին հաշվետվությունում արտացոլված մեծությունների վրա եղել է հետևյալը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ:

Հազ. ՀՀ դրամ	Սկզբնական ներկայացմամբ	Ուղղում 2	Ուղղում 3	Ուղղում 4	Վերաներկայացված 2019թ. հունվարի 1-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ					
Բանկերում պահվող ավանդներ	-	-	103,914	-	103,914
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	659,163	-	(103,914)	-	555,249
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՉՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ					
Դրամական նվիրատվությունների գծով պարտավորություններ շահառուներին	86,912	-	-	(56,083)	30,829
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	98,666	-	-	(98,666)	-
Հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորություններ	-	70,945	-	64,494	135,439
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	185,578	70,945	-	(90,255)	166,268
Դրամական նվիրատվությունների գծով պարտավորություններ շահառուներին	-	-	-	56,083	56,083
Հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորություններ	-	10,619	-	-	10,619
Հաշվեգրված ծախսեր և այլ պարտավորություններ	-	-	-	34,172	34,172
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	343,331	10,619	-	90,255	444,205
Կուտակված պոդյուևք	876,237	(81,564)	-	-	794,673
Չուտ ակտիվներ	876,237	(81,564)	-	-	794,673

Ֆինանսական գործունեության հաշվետվության ներկայացումը 2020թ. փոխվել է 2019թ. օգտագործվածի համեմատ:

Սխալների ուղղումն ազդել է զուտ ակտիվներում փոփոխությունների, ֆինանսական վիճակի մասին, ֆինանսական գործունեության մասին հաշվետվությունների, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններին վրա, և 2019թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. հունվարի 1-ի դրությամբ հետևյալ բացահայտումների վրա.

1. Ուղղում 1-ն ազդել է Ծանոթագրություն 7-ի վրա՝ «Հիմնական միջոցներ», Ծանոթագրություն 14-ի վրա՝ «Հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորություններ» և Ծանոթագրություն 19-ի վրա՝ «Ծրագրի/սպառնալից ծախսեր»:
2. Ուղղում 2-ն ազդել է Ծանոթագրություն 12-ի վրա՝ «Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ» և Ծանոթագրություն 11-ի վրա՝ «Բանկերում պահվող ավանդներ»:

2019թ. ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են դրամով: 2020թ. ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով: Համեմատական տեղեկատվությունը փոխվել է և ներկայացվել հազար ՀՀ դրամով:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության Էական գնահատականներ և դատողություններ

Հիմնադրամը կատարում է հաշվապահական հաշվառման գնահատականներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների և հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա: Գնահատականներն ու դատողությունները շարունակական կերպով վերանայվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ինչպիսիք են հետագա իրադարձությունների ակնկալիքները, որոնք առկա պայմաններում տրամաբանական են համարվում: Գնահատականներից բացի, ղեկավարությունը կատարում է նաև մասնագիտական դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում: Մասնագիտական դատողությունները, որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արժեքների վրա, և գնահատականները, որոնք կարող են հիմք հանդիսանալ հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում նշանակալի ճշգրտման համար, հետևյալն են.

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը. Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը կատարվում է՝ ելնելով մասնագիտական դատողությունից, հիմք ընդունելով համանման ակտիվների գծով առկա փորձը: Այս ակտիվներում մարմնավորվող ապագա տնտեսական օգուտները հիմնականում կատարվեն դրանց օգտագործումից: Սակայն մի շարք այլ գործոններ, ինչպիսիք են՝ տեխնիկական կամ առևտրային տեսանկյունից մաշվածությունը, հաճախ հանգեցնում են տվյալ ակտիվների հետ կապված տնտեսական շահույթի նվազմանը:

Ղեկավարությունը գնահատում է հիմնական միջոցների օգտակար ծառայության մնացորդային ժամկետը՝ հիմք ընդունելով ակտիվների տեխնիկական վիճակը, և հաշվի առնելով հաշվարկային ժամանակահատվածը, որի ընթացքում տվյալ ակտիվները Հիմնադրամի համար կառաջացնեն տնտեսական շահույթ: Հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոնները. ա) ակտիվների ակնկալվող օգտագործման ժամկետը, բ) սարքավորումների ակնկալվող մաշվածությունը, որը կախված է շահագործման բնութագրերից և տեխնիկական սպասարկման ծրագրից, և գ) տեխնիկական կամ առևտրային տեսանկյունից մաշվածությունը, որն առաջանում է շուկայի պայմանների փոփոխության հետևանքով:

Եթե ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետները ղեկավարության կողմից գնահատված ժամկետներից տարբերվեին 10%-ով, ամորտիզացիոն մասհանումները կաճեին կամ կնվազեին 11,599 հազ. ՀՀ դրամով 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում (2019թ. կաճեին 1,814 հազ. ՀՀ դրամով կամ կնվազեին 8,603 հազ. ՀՀ դրամով):

Հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորությունների գնահատում

Հիմնադրամն իրականացրել է հետաշխատանքային հատուցումների պլանների գնահատում հետևյալ ենթադրությունների հիման վրա.

- SOS-մայրերի կյանքի բարձր տևողության հավանականությունն ավելի շատ է, քան մյուս իգական սեռի բնակչության դեպքում՝ 1%-ից մինչև 10% (տարբեր տարիքների համար)
- Չեղչման գործակիցը ընդունվում է միջևաժամկետ պետական արժեթղթերի եկամտաբերության չափով:
- Մայրերի համար հիմնադրամից հեռանալու այլ պատճառ չկա, բացի մահվան վրա հասնելը նախքան թոշակի անցնելու տարիքը:
- Պետական կենսաթոշակային նպաստները կշարունակեն աճել:
- Աշխատավարձը կշարունակի աճել՝ համաձայն Հիմնադրամի ներքին հատուցման համակարգի, որի հիմնական բաղադրիչներն են՝ գնաճի ցուցանիշը և հիմնադրամում աշխատանքային ստաժի տևողությունը:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության Եական գնահատականներ և դատողություններ (շարունակություն)

Հիմնական միջոցների գնահատում արժեզրկման տեսանկյունից:

Հիմնադրամը իրականացրել է հիմնական միջոցների արժեզրկման գնահատում 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Արժեզրկման գնահատման համար կիրառվել է «Իրական արժեքը՝ հանած վաճառքի գծով ծախսեր» մոտեցումը, քանի որ Հիմնադրամը շահույթ չի հետապնդող կազմակերպություն է և նրա ոչ ընթացիկ ակտիվները հիմնականում չեն առաջացնում օգտագործումից դրամական միջոցների հոսքեր: Իրական արժեքը՝ հանած վաճառքի գծով ծախսերը բացահայտելու նպատակով Հիմնադրամը հայտնաբերել է շուկայում համարելի օբյեկտներ և վաճառողի և գնորդի միջև բանակցություններում կիրառել է գեղջ բաց աղբյուրներում հայտնաբերված գների նկատմամբ: Համարելի ապրանքների գների այլ ճշգրտումներ կիրառվել են նաև այն դեպքում, եթե օբյեկտների չափերը Եականորեն տարբերվում են, և այլ դեպքերում: Արդյունքում, 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեզրկում չի հայտնաբերվել:

5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին

Ստորև թվարկված վերանայված ստանդարտների կիրառումը Հիմնադրամի համար պարտադիր է՝ սկսած 2020թ. հունվարի 1-ից, սակայն դրանք Եական ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի վրա:

- Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքների փոփոխություններ (թողարկված են 2018թ. մարտի 29-ին և ուժի մեջ են մտնում 2020թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):
- Բիզնեսի սահմանում. ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ (թողարկված են 2018թ. հոկտեմբերի 22-ին և գնումների մասով ուժի մեջ են մտնում 2020թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):
- Նյութականության որոշում. ՀՀՄՍ 1-ի և ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ (թողարկված են 2018 թ. հոկտեմբերի 31-ին և ուժի մեջ են մտնում 2020թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):
- Բազային տոկոսադրույքի բարեփոխում. ՀՀՄՍ 9-ի, ՀՀՄՍ 39-ի և ՀՀՄՍ 7-ի փոփոխություններ (թողարկված են 2019 թ. սեպտեմբերի 26-ին և ուժի մեջ են մտնում 2020թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):
- COVID 19-ով պայմանավորված վարձավճարների գծով արտոնություններ. ՀՀՄՍ 16-ի փոփոխություն (թողարկված է 2020 թ. մայիսի 28-ին ուժի մեջ է մտնում 2020թ. հունիսի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

ՀՀՄՍ 17 «Ապահովագրական պայմանագրեր» (թողարկված է 2017թ. մայիսի 18-ին և ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 17-ը փոխարինում է ՀՀՄՍ 4-ին, որը թույլ էր տալիս ընկերություններին կիրառել ապահովագրական պայմանագրերի համար գործող հաշվապահական հաշվառման գործելակերպը, ինչը դժվարացնում էր մնացած առումներով համանման ապահովագրական ընկերությունների ֆինանսական արդյունքների համեմատությունը և համադրությունը ներդրողների համար: ՀՀՄՍ 17-ը մեկ միասնական սկզբունքի վրա հիմնված հաշվապահական ստանդարտ է՝ ապահովագրողի կողմից պահվող բոլոր տեսակի ապահովագրության պայմանագրերի, այդ թվում վերաապահովագրության պայմանագրերի հաշվառումը իրականացնելու համար: Ստանդարտը պահանջում է, որ ապահովագրության պայմանագրերի խմբերը ճանաչվեն և չափվեն (i) ապագա դրամական միջոցների հոսքերի՝ ռիսկով ճշգրտված ներկա արժեքով (պայմանագրերի կատարման դրամական հոսքեր)՝ հաշվի առնելով պայմանագրերի կատարման դրամական հոսքերի վերաբերյալ առկա ողջ տեղեկատվությունը, որը համահունչ է դիտարկելի շուկայական տեղեկատվությանը, գումարած՝ (եթե արժեքը պարտավորություն է) կամ հանած՝ (եթե արժեքը ակտիվ է) (ii) պայմանագրերի խմբի չբաշխված շահույթի գումարը (պայմանագրերի ծառայության մարժա): Ապահովագրողները կարողացել են ապահովագրական պայմանագրերի մեկ խմբից ստացված շահույթը այն ժամանակահատվածում, որի ընթացքում դրանք ապահովում են ծածկույթ և ազատվում են ռիսկից: Եթե պայմանագրերի խումբը հանդիսանում է կամ դառնում է ոչ շահույթաբեր, կազմակերպությունը անմիջապես ճանաչում է վնաս:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

COVID 19-ով պայմանավորված վարձավճարների գծով արտոնություններ. ՖՅՄՍ 16-ի փոփոխություն (թողարկվել է 2020 թ. մայիսի 28-ին ուժի մեջ է մտնում 2020թ. հունիսի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխությամբ վարձակալներին (սակայն ոչ վարձատուներին) տրվում է հայեցողական հնարավորություն՝ որոշելու, թե արդյոք COVID 19-ով պայմանավորված վարձավճարների գծով արտոնությունները հանդիսանում են վարձակալության պայմանների փոփոխություն: Վարձակալները կարող են իրենց հայեցողությամբ վարձավճարների գծով արտոնությունների չափումը իրականացնել այնպես, ինչպես եթե դրանք չհանդիսանային վարձակալության պայմանների փոփոխություն: Մի շարք դեպքերում սա կհանգեցնի վարձավճարների հաշվառման՝ որպես փոփոխական վարձակալական վճարներ: Գործնական նպատակահարմարությամբ պայմանավորված այս լուծումը վերաբերում է միայն այն վարձավճարների գծով արտոնություններին, որոնք ուղղակիորեն հանդիսանում են COVID-19 համավարակի հետևանք, և միայն այն դեպքում, եթե բավարարված են հետևյալ բոլոր պայմանները. վարձավճարներում փոփոխությունները հանգեցնում են վարձակալության դիմաց հատուցման այնպիսի վերանայման, որ այն ըստ էության հավասար լինի, կամ չգերազանցի վերանայումից անմիջապես առաջ վարձակալության դիմաց հատուցման գումարը. վարձավճարների ցանկացած նվազեցում ազդում է միայն 2021թ.հունիսի 30-ից ոչ ուշ վճարման ենթակա վճարումների վրա. և վարձակալության այլ պայմանների մեջ տեղի չեն ունենում էական փոփոխություններ: Եթե վարձակալը որոշում է կիրառել գործնական նպատակահարմարությունը վարձակալության նկատմամբ, այն պետք է գործնական նպատակահարմարությունը հետևողականորեն կիրառի համանման բնութագրեր և համանման պայմաններում գտնվող բոլոր վարձակալական պայմանագրերի նկատմամբ: Փոփոխությունը ենթակա է կիրառման հետընթաց կերպով, համաձայն ՀՀՄՍ 8-ի սակայն վարձակալներից չի պահանջվում կատարել նախորդ ժամանակաշրջանի տվյալների վերաներկայացում կամ կատարել՝ ՀՀՄՍ 8-ի 28 (գ) պարբերությամբ սահմանված բացահայտում:

Բազային տոկոսադրույքի (IBOR) բարեփոխում. ՖՅՄՍ 9-ի, ՀՀՄՍ 39-ի, ՖՅՄՍ 7-ի, ՖՅՄՍ 4-ի և ՀՀՄՍ 16-ի փոփոխություններ - Փուլ 2 (թողարկված են 2020թ. օգոստոսի 27-ին և ուժի մեջ են մտնում 2021թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փուլ 2-ի ուղղումներն ուղղված են բարեփոխումների ներդրման արդյունքում ի հայտ եկող հարցերի լուծմանը, ներառյալ այն հարցերի, որոնք վերաբերում են մեկ բազային տոկոսադրույքի փոխարինմանը այլընտրանքայինով: Փոփոխությունները վերաբերում են հետևյալ ոլորտներին.

- *Բազային տոկոսադրույքի բարեփոխումից բխող դրամական միջոցների պայմանագրային հոսքերի որոշման հիմքում ընկած փոփոխությունների մշակում.* («IBOR բարեփոխում»): Ամորտիզացված արժեքով չափման ենթակա գործիքների համար, փոփոխություններով նախատեսված է, որ գործնական նպատակահարմարությունից ելնելով, կազմակերպությունները IBOR-ի բարեփոխման արդյունքում պայմանագրային դրամական հոսքերի որոշման հիմքի փոփոխությունը պետք է հաշվարկեն արդյունավետ տոկոսադրույքի արդիականացման միջոցով, օգտագործելով ՀՀՄՍ 9-ի B5.4.5 պարբերության ուղեցույցը: Հետևաբար, այդ ժամանակ շահույթ կամ վնաս չի ճանաչվել: Այս գործնական նպատակահարմարությունը կիրառելի է միայն այդպիսի փոփոխության նկատմամբ և այնքանով, որքանով այն անհրաժեշտ է որպես IBOR բարեփոխման ուղղակի հետևանք, և նոր հիմքը տնտեսապես համարժեք է նախորդ հիմքին: ՀՀՄՍ 9-ի ներդրման ժամանակավոր արտոնությունից օգտվող ապահովագրողները նույնպես պետք է առաջնորդվեն նույն գործնական նպատակահարմարությամբ: Նաև փոփոխվել է ՀՀՄՍ 16-ը, ըստ որի վարձակալներից պահանջվում է նույն գործնական նպատակահարմարությամբ առաջնորդվել վարձակալության պայմանագի այն փոփոխությունները հաշվառելիս, որոնք IBOR բարեփոխման արդյունքում հանգեցնում են ապագա վարձակալական վճարների որոշման հիմքի փոփոխության:
- *Հեջավորման հարաբերություններում պայմանագրով չսահմանված ռիսկի բաղադրիչների 1-ին փուլի գծով փոփոխությունների համար սահմանված արտոնությունների ավարտի ամսաթիվը.* փուլ 2-ի փոփոխությունների համաձայն կազմակերպություններից պահանջվում է հեռանկարում դադարեցնել 1-ին փուլի արտոնությունները պայմանագրով չսահմանված ռիսկի բաղադրիչների նկատմամբ նշված երկու ամսաթվերից առավել վաղ ամսաթվի դրությամբ. պայմանագրով չսահմանված ռիսկի բաղադրիչում փոփոխության կատարման ամսաթիվ, կամ հեջավորման հարաբերությունների դադարեցման ամսաթիվ: 1-ին փուլի փոփոխությունները չեն սահմանում ռիսկի բաղադրիչների ավարտի ամսաթիվը:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

- *Չեջավորման հաշվառմանը ներկայացվող հատուկ պահանջների կիրառումից լրացուցիչ ժամանակավոր բացառություններ*։ 2-րդ փուլի փոփոխությունները նախատեսում են չեջավորման հաշվառման՝ ՀՀՄՍ 39 և ՀՀՄՍ 9-ով սահմանված հատուկ պահանջների կիրառման լրացուցիչ ժամանակավոր արտոնություններ հեջավորման հարաբերությունների նկատմամբ, որոնք անմիջական ազդեցություն են կրել IBOR բարեփոխման արդյունքում։
- *IBOR բարեփոխմանը վերաբերող լրացուցիչ բացահայտումներ համաձայն ՀՀՄՍ 7-ի*։ Փոփոխությունները սահմանում են հետևյալ տեղեկատվության բացահայտման պահանջներ։ (i) ինչպես է կազմակերպությունը կառավարում այլընտրանքային բազային տոկոսադրույքների անցումը, առաջընթացը և անցումից բխող ռիսկերը։ (ii) քանակական տեղեկատվություն անցմանը նախապատրաստվող ածանցյալ և ոչ ածանցյալ ֆինանսական գործիքների վերաբերյալ՝ տարանջատված ըստ նշանակալից բազային տոկոսադրույքների։ (iii) IBOR բարեփոխման արդյունքում ռիսկերի կառավարման ռազմավարության ցանկացած փոփոխության նկարագրություն։

«Ակտիվների վաճառք կամ հատկացում ներդրողի և ասոցիացված կազմակերպությունների կամ համատեղ ձեռնարկումների միջև» - փոփոխություններ ՀՀՄՍ 10-ում և ՀՀՄՍ 28-ում (թողարկված են 2014թ. սեպտեմբերի 11-ին, և ուժի մեջ են մտնում ՀՀՄՍ-ի կողմից որոշվելիք ամսաթվին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար)։ Այս փոփոխությունները վերաբերում են ներդրողի և իր ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկումների միջև ակտիվների վաճառքին կամ հատկացմանը վերաբերող՝ ՀՀՄՍ 10-ի և ՀՀՄՍ 28-ի պահանջների միջև գոյություն ունեցող անհամապատասխանությանը։ Փոփոխությունների կիրառման հիմնական հետևանքն այն է, որ ամբողջ շահույթը կամ վնասը ճանաչվում է ամբողջությամբ այն դեպքում, երբ գործարքը առնչվում է ձեռնարկատիրական գործունեությանը։ Շահույթը կամ վնասը ճանաչվում է մասնակիորեն այն դեպքում, երբ ակտիվը չի առնչվում ձեռնարկատիրական գործունեությանը, նույնիսկ եթե այդ ակտիվները պատկանում են դուստր կազմակերպությանը։

Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների դասակարգումը - ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ (թողարկված են 2020թ. հունվարի 23-ին և ուժի մեջ են մտնում 2022թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար)։ Կիրառման սահմանափակ շրջանակ ունեցող այս փոփոխություններով հստակեցվում է, որ պարտավորությունների՝ որպես կարճաժամկետ կամ երկարաժամկետ դասակարգումը պայմանավորված է հաշվետու ժամանակաշրջանի վերջում գոյություն ունեցող իրավունքներով։ Պարտավորությունները երկարաժամկետ են, եթե կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ըստ էության ունի դրանց մարումն առնվազն 12 ամսով հետաձգելու իրավունք։ Ուղեցույցն այլևս չի սահմանում այդ իրավունքի անվերապահ լինելու պահանջ։ Մարումը ապագայում հետաձգելու իրավունքի իրացման առումով ղեկավարության ակնկալիքները ազդեցություն չունեն պարտավորությունների դասակարգման վրա։ Մարումը հետաձգելու իրավունքն առաջանում է միայն այն դեպքում, եթե կազմակերպությունը ժամանակաշրջանի վերջում բավարարում է բոլոր կիրառելի պայմանները։ Պարտավորությունը դասակարգվում է որպես կարճաժամկետ, եթե պայմանը խախտվել է հաշվետու ամսաթվի դրությամբ կամ դրանից առաջ, նույնիսկ եթե հաշվետու ժամանակաշրջանի վերջում պարտատիրոջից ստացվել է պայմանի կատարման պարտավորությունից ազատում։ Միևնույն ժամանակ, վարկը դասակարգվում է որպես երկարաժամկետ, եթե վարկային պայմանագրի պայմանը խախտվում է միայն հաշվետու ամսաթվից հետո։ Բացի այդ, փոփոխությունները հստակեցնում են պարտքի դասակարգման պահանջները, որոնք կազմակերպությունը կարող է մարել՝ այն սեփական կապիտալի վերածելու միջոցով։ «Մարում» հասկացությունը սահմանվում է որպես պարտավորության դադարեցում՝ դրամական միջոցների, տնտեսական օգուտները մարմնավորող այլ ռեսուրսների կամ կազմակերպության սեփական բաժնային գործիքների միջոցով կատարված վերջնահաշվարկի արդյունքում։ Բացառություն է սահմանվում փոխարկելի գործիքների համար, որոնք կարող են վերածվել սեփական կապիտալի, բայց միայն այն գործիքների համար, երբ փոխարկման օպցիոնը դասակարգվում է որպես բարդ ֆինանսական գործիքի առանձին բաղադրիչ հանդիսացող բաժնային գործիք։

Հիմնադրամը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա։

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

«Նախքան ակտիվի նպատակային օգտագործումը ստացված հասույթ, անբարենպաստ պայմանագրեր. պայմանագրի կատարման արժեքը», «Հողում հայեցակարգային հիմունքներին». ՀՀՄՍ 16-ի, ՀՀՄՍ 37-ի և ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ՝ սահմանափակ կիրառության շրջանակով, և ՖՀՄՍ 1-ին, ՖՀՄՍ 9-ին, ՖՀՄՍ 16-ին և ՀՀՄՍ 41-ին վերաբերող 2018-2020 թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ (թողարկված են 2020թ. մայիսի 14-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 16-ի փոփոխությամբ կազմակերպություններին արգելվում է հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքից նվազեցնել այն պատրաստի արտադրանքի վաճառքից ստացված հասույթը, որն արտադրվել է կազմակերպության կողմից ակտիվն իր նպատակային օգտագործման համար անհրաժեշտ վիճակի բերելու ընթացքում: Նման պատրաստի արտադրանքի վաճառքից ստացված հասույթը, դրա արտադրության ծախսերի հետ միասին, այժմ ենթակա է ճանաչման շահույթում կամ վնասում: Նման պատրաստի արտադրանքի սկզբնական արժեքի չափման համար կազմակերպությունը պետք է կիրառի ՀՀՄՍ 2-ը: Սկզբնական արժեքը չի ներառի նման կերպ փորձարկվող ակտիվի մաշվածությունը, քանի որ այն դեռ պատրաստ չէ իր նպատակային օգտագործման համար: ՀՀՄՍ 16-ի փոփոխությունը նաև հստակեցնում է, որ կազմակերպությունը «ստուգում է ակտիվի պատշաճ գործունակությունը»՝ ակտիվի տեխնիկական և ֆիզիկական բնութագրերը գնահատելու միջոցով:

Այս չափման համար էական չեն այդպիսի ակտիվի ֆինանսական ցուցանիշները: Հետևաբար, ակտիվը կարող է շահագործվել դեկավարության մտադրությունների համաձայն, և մաշվածությունը կարող է հաշվարկվել մինչև դեկավարության կողմից ակնկալվող գործառնական շահագործման համար անհրաժեշտ վիճակի հասնելը:

ՀՀՄՍ 37-ի փոփոխությունը հստակեցնում է «պայմանագրի կատարման գծով ծախսեր» հասկացությունը: Փոփոխությամբ պարզաբանվում է, որ պայմանագրի կատարման գծով ուղղակի ծախսերը ներառում են այդ պայմանագրի կատարման հավելյալ ծախսերը, ինչպես նաև պայմանագրի կատարման հետ անմիջականորեն կապված այլ ծախսերի բաշխումը:

Փոփոխությամբ նաև հստակեցվում է, որ նախքան անբարենպաստ պայմանագրի գծով առանձին պահուստի ձևավորումը, կազմակերպությունը ճանաչում է արժեզրկումից կորուստ պայմանագրի կատարման ընթացքում օգտագործված ակտիվների գծով, այլ ոչ թե պայմանագրի կատարման համար հատկացված ակտիվների գծով:

ՖՀՄՍ 3-ում կատարվել է լրացում՝ ներառելով հղում ֆինանսական հաշվետվությունների 2018թ. Հայեցակարգային հիմունքներին, ինչը թույլ է տալիս սահմանել ակտիվի կամ պարտավորության հասկացությունը ձեռնարկատիրական գործունեության միավորման համատեքստում: Մինչ այս փոփոխության ընդունումը, ՖՀՄՍ 3-ը հղում էր կատարում 2001թ.-ի ֆինանսական հաշվետվությունների Հայեցակարգային հիմունքներին: Բացի այդ, ՖՀՄՍ 3-ում ավելացվել է նոր բացառություն պայմանական դեպքերի և պայմանագրային պարտավորությունների համար: Այս բացառությամբ նախատեսվում է, որ ՖՀՄՍ 3-ը կիրառող կազմակերպությունը, որոշակի տիպի պայմանական դեպքերի և պայմանագրային պարտավորությունների համար ֆինանսական հաշվետվությունների 2018թ. Հայեցակարգային հիմունքների փոխարեն պետք է հղում կատարի ՀՀՄՍ 37-ին կամ ՖՀՄՍԻ (IFRIC) 21-ին: Առանց այս նոր բացառության, կազմակերպությունը ստիպված կլիներ ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքում ճանաչել որոշ պարտավորություններ, որոնք չէր ճանաչի համաձայն ՀՀՄՍ 37-ի: Հետևաբար, ձեռքբերումից անմիջապես հետո կազմակերպությունը ստիպված կլիներ ապաճանաչել այդպիսի պարտավորությունները և ճանաչել տնտեսական օգուտներ չմարմնավորող եկամուտ: Նաև պարզաբանվել է, որ ձեռք բերող կազմակերպությունը պարտավոր չէ ձեռքբերման ամսաթվի դրությամբ ճանաչել պայմանական ակտիվներ, ինչպես սահմանված է ՀՀՄՍ 37-ում:

ՖՀՄՍ 9-ի փոփոխությունն անդրադառնում է այն հարցերին, թե որ տեսակի վճարումներն են ենթակա ներառման «10% փորձարկման» կազմում՝ ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման նպատակով: Ծախսերը կամ վճարումները կարող են կատարված լինել հոգուտ երրորդ անձանց կամ վարկատուի: Այս փոփոխության համաձայն, երրորդ անձանց օգտին կատարված ծախսերը կամ վճարումները չեն ներառվի «10% փորձարկման» կազմում:

Փոփոխություններ են կատարվել ՖՀՄՍ 16-ի 13-րդ նկարագրական օրինակում. հանվել է վարձատուի կողմից վարձակալվող գույքի բարելավումներին վերագրվող վճարումների օրինակը: Այս փոփոխությունը կատարվել է՝ վարձակալվող գույքի բարելավումների հաշվարկման հնարավոր անորոշությունից խուսափելու համար:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

ՖՀՄՍ 1-ը թույլ է տալիս օգտվել բացառությունից այն դեպքում, եթե դուստր ձեռնարկությունը սկսում է ՖՀՄՍ-ի կիրառումն ավելի ուշ ամսաթվով, քան իր մայր կազմակերպությունը: Դուստր ձեռնարկությունը կարող է չափել իր ակտիվներն ու պարտավորությունները այն հաշվեկշռային արժեքով, որով դրանք պետք է ներառվեն մայր կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում՝ ելնելով մայր կազմակերպության ՖՀՄՍ-ի անցնելու ամսաթվից, եթե տեղի ունեցած չլինեին ճշգրտումներ համախմբման և ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքների արտացոլման նպատակներով, որի ներքո մայր կազմակերպությունը ձեռք է բերել նշված դուստր ձեռնարկությունը: ՖՀՄՍ 1-ում կատարվել է փոփոխություն, որը հնարավորություն է տալիս սույն ՖՀՄՍ 1-ի բացառությունը կիրառած կազմակերպություններին նաև արտարժույթի փոխարկումից կուտակային տարբերությունները չափելիս օգտագործել մայր կազմակերպության կողմից ներկայացված թվային մեծությունները՝ ելնելով մայր կազմակերպության ՖՀՄՍ-ի անցման ամսաթվից: ՖՀՄՍ 1-ի այս փոփոխությամբ վերոնշյալ բացառությունը տարածվում է արտարժույթի փոխարկումից առաջացած կուտակային տարբերությունների վրա, և նպատակ ունի նվազեցնել ՖՀՄՍ-ն առաջին անգամ կիրառող կազմակերպության ծախսերը: Այս փոփոխությունը կկիրառվի նաև դուստր և համատեղ ձեռնարկությունների վրա, որոնք կօգտվեն ՖՀՄՍ 1-ով սահմանված նույն բացառությունից:

Վերացվել է պահանջը, ըստ որի կազմակերպությունները ՀՀՄՍ 41-ի համաձայն իրական արժեքը չափելիս պարտավոր էին հարկային հաշվառման տեսանկյունից հաշվի չառնել դրամական հոսքերը: Այս փոփոխության նպատակն է՝ ապահովել համապատասխանություն հարկումից հետո գեղչված դրամական հոսքերի ստանդարտի պահանջին:

Հիմնադրամը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 4-ի փոփոխություններ (թողարկված են 2020 թ. հունիսի 25-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխությունները ներառում են մի շարք պարզաբանումներ՝ ՖՀՄՍ 17-ի ներդրման գործընթացը դյուրիմացնելու, ինչպես նաև ստանդարտի պահանջները և անցումային որոշակի դրույթները հստակեցնելու նպատակով: Այս փոփոխությունները վերաբերում են ՖՀՄՍ 17 -ի ուղբ ոլորտներին և չեն փոխում ստանդարտի հիմնարար սկզբունքները: ՖՀՄՍ 17-ում տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները.

- *Ուժի մեջ մտնելու ամսաթիվ.* ՖՀՄՍ 17-ի (փոփոխություններով) ուժի մեջ մտնելու ամսաթիվը հետաձգվել է երկու տարով: Ստանդարտը պետք է կիրառվի 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: ՖՀՄՍ 4-ով սահմանված՝ ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակավոր արտոնությունը նույնպես հետաձգվել է մինչև 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջաններ:
- *Ապահովագրության ձեռքբերման դրամական հոսքերի ակնկալվող փոխհատուցում.* կազմակերպություններից պահանջվում է իրենց ձեռքբերման ծախսերի մի մասը դասակարգել համապատասխան պայմանագրերին, որոնց համար ակնկալվում է երկարաձգում, և այդ ծախսերը ճանաչել որպես ակտիվներ, քանի դեռ կազմակերպությունը չի ճանաչել պայմանագրի երկարաձգման ժամկետը: Կազմակերպությունները պարտավոր են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատել ակտիվի վերականգնման հավանականությունը և կոնկրետ ակտիվների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնել ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:
- *Ներդրումային ծառայություններին վերագրվող պայմանագրային ծառայությունների մարժա.* Ծածկույթի տարրերը անհրաժեշտ է որոշել՝ հաշվի առնելով հատույցների ծավալը, ինչպես նաև ապահովագրական ծածկույթի և ներդրումային ծառայությունների ակնկալվող ժամկետը՝ փոփոխական վճարներ նախատեսող պայմանագրերի և այլ՝ ընդհանուր մոդելի ներքո ներդրումային եկամուտների ստացում նախատեսող ծառայությունների պայմանագրերի համար: Ներդրումային գործունեության գծով ծախսերը պետք է ներառվեն որպես դրամական միջոցների հոսքեր ապահովագրության պայմանագրի շրջանակներում, երբ կազմակերպությունը նման գործողությունները ձեռնարկում է ապահովագրողի համար ապահովագրության ծածկույթից ստացվող օգուտները մեծացնելու նպատակով:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

- *Ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրեր. վնասների վերականգնում.* Երբ կազմակերպությունը վնաս է ճանաչում սկզբնական ճանաչման պահին հիմնական ապահովագրական պայմանագրերի անբարենպաստ խմբի գծով, կամ խմբում անբարենպաստ բազային ապահովագրության պայմանագրեր ներառելու արդյունքում, կազմակերպությունը պետք է ճշգրտի ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրերի համապատասխան խմբի պայմանագրային ծառայությունների գծով մարժան և ճանաչի այդ վերաապահովագրության պայմանագրերի գծով շահույթ: Վերաապահովագրության պայմանագրով վերականգնված վնասի չափը հաշվարկվում է՝ բազային ապահովագրության պայմանագրերով ճանաչված վնասը բազմապատկելով բազային ապահովագրության պայմանագրերի գծով պահանջների տոկոսին, որը կազմակերպությունն ակնկալում է վերականգնել ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրով: Այս պահանջը կկիրառվի միայն այն դեպքում, եթե ձեռք բերված վերաապահովագրության պայմանագիրը ճանաչվի նախքան բազային ապահովագրության պայմանագրերի գծով վնասի ճանաչումը, կամ վերջինիս հետ միաժամանակ:
- *Այլ փոփոխություններ.* Այլ փոփոխություններով նախատեսվում են գործողության շրջանակից բացառություններ վարկային քարտերի որոշ պայմանագրերի (կամ նմանատիպ պայմանագրերի) և որոշ վարկային պայմանագրերի համար: Սահմանվում է նաև ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ապահովագրության պայմանագրերով նախատեսված ակտիվների և պարտավորությունների ներկայացում պորտֆելներում խմբերի փոխարեն: Նախատեսվում է ռիսկերի մեղմացման տարբերակի կիրառելիությունն այն դեպքում, երբ ֆինանսական ռիսկերի մեղմացման նպատակով գործադրվում են ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրեր և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ: Նախատեսվում է հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության հնարավորություն՝ ՖՀՄՍ 17-ի կիրառմամբ նախորդ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում արտացոլված հաշվապահական գնահատումներում փոփոխությունների համար: Նախատեսվում է կոնկրետ ապահովագրողին վերագրվող եկամտահարկի վճարների և մուտքերի ներառում պայմանագրերի կատարման դրամական հոսքերում, ըստ ապահովագրության պայմանագրի: Սահմանվում են անցումային շրջանի ընթացքում պահանջներից ընտրողական բացառություններ և այլ ոչ էական փոփոխություններ:

Հիմնադրամը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների դասակարգումը, ուժի մեջ մտնելու ամսաթվի հետաձգում. ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ (թողարկված են 2020 թ. հուլիսի 15-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 1-ի փոփոխությունները, որոնք վերաբերում են պարտավորությունների՝ որպես կարճաժամկետ և երկարաժամկետ դասակարգմանը, թողարկվել են 2020թ. հունվարին, և նախնական ուժի մեջ մտնելու ամսաթիվ է սահմանվել 2022թ. հունվարի 1-ը: Այնուամենայնիվ, COVID-19 համավարակով պայմանավորված, ուժի մեջ մտնելու ամսաթիվը հետաձգվել է մեկ տարով, որպեսզի կազմակերպությունները բավարար ժամանակ ունենան փոփոխությունների արդյունքում դասակարգումներում տեղի ունեցող փոփոխությունները ներդնելու համար:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ-ի գործնական կիրառության դրույթ 2-ում. Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (թողարկված է 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 1-ի փոփոխությամբ ընկերություններից պահանջվում է ներկայացնել իրենց էական հաշվապահական հաշվառման տեղեկատվությունը, այլ ոչ թե իրենց հաշվապահական հաշվառման քաղաքականության առանցքային դրույթները: Փոփոխությունը նաև ներկայացնում է էական հաշվապահական հաշվառման տեղեկատվության սահմանումը: Փոփոխությունը նաև պարզաբանում է, որ ակնկալվում է, որ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ տեղեկատվությունը կհամարվի էական այն դեպքում, եթե առանց այդ տեղեկատվության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողները հնարավորություն չէին ունենա ըմբռնել ֆինանսական հաշվետվություններում առկա այլ էական տեղեկատվությունը:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

Փոփոխությունը ներկայացնում է հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ այն տեղեկատվության ներկայացուցչական օրինակները, որոնք, ամենայն հավանականությամբ, կարող են էական համարվել կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների համար: Ավելին, ՀՀՄՍ 1-ի փոփոխությամբ պարզաբանվում է, որ հաշվապահական հաշվառման քաղաքականության ոչ էական տեղեկատվությունը բացահայտելու անհրաժեշտություն չկա: Այնուամենայնիվ, նման տեղեկատվությունը բացահայտելիս, այն չպետք է քողարկի հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվությունը: Այս փոփոխությանը աջակցելու համար ՀՀՄՍ-ի գործնական կիրառության 2-րդ դրույթը՝ «Էականության վերաբերյալ դատողություններ կատարելը» նույնպես փոփոխվել է՝ տրամադրելով ցուցումներ այն մասին, թե ինչպես է անհրաժեշտ կիրառել էականության հայեցակարգը հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների համար: Հիմնադրամը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվություններին վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում. Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (թողարկված է 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 8-ի փոփոխությունը պարզաբանում է, թե ընկերությունները ինչպես պետք է հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները տարբերեն հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխություններից: Հիմնադրամը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվություններին վրա:

COVID 19-ով պայմանավորված վարձավճարների գծով արտոնություններ. ՀՀՄՍ 16-ի փոփոխություն (թողարկվել է 2021թ. մարտի 31-ին և ուժի մեջ է մտնում 2021թ. ապրիլի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): 2020թ. մայիսին ՀՀՄՍ 16-ի փոփոխությամբ վարձակալների համար հայեցողական գործնական նպատակահարմարություն է սահմանվել՝ գնահատելու, թե արդյոք COVID-19-ի հետ կապված վարձավճարների գծով արտոնությունները, որոնք հանգեցրել են 2021թ. հունիսի 30-ին կամ դրանից առաջ վճարվող վարձակալական վճարների նվազեցման, իրենից ներկայացնում է վարձակալության պայմանների փոփոխություն: 2021թ. մարտի 31-ին հրապարակված փոփոխությամբ գործնական նպատակահարմարության ժամկետը երկարաձգվել է 2021թ. հունիսի 30-ի փոխարեն սահմանվելով մինչև 2022թ. հունիսի 30:

Մեկ գործարքի գծով առաջացած ակտիվների և պարտավորությունների հետ կապված հետաձգված հարկեր. ՀՀՄՍ 12-ի փոփոխություններ ((թողարկվել է 2021թ. մայիսի 7-ին և ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները սահմանում են, թե ինչպես հաշվառել հետաձգված հարկը այնպիսի գործարքների համար, ինչպիսիք են վարձակալությունը և շահագործումից հանման պարտավորությունները: Որոշակի հանգամանքներում կազմակերպություններն ազատվում են հետաձգված հարկի ճանաչումից, երբ նրանք առաջին անգամ են ճանաչում ակտիվները կամ պարտավորությունները: Նախկինում որոշակի անորոշություն կար այն հարցում, թե արդյոք այդ բացառությունը կիրառվում է այնպիսի գործարքների նկատմամբ, ինչպիսիք են վարձակալությունը և շահագործումից հանելու պարտավորությունները. գործարքներ, որոնց համար ճանաչվում են և՛ ակտիվ, և՛ պարտավորություն: Փոփոխությունները պարզաբանում են, որ ազատումը չի կիրառվում, և որ կազմակերպություններից պահանջվում է ճանաչել հետաձգված հարկը նման գործարքների համար:

Փոփոխություններով պահանջվում է, որ ընկերությունները ճանաչեն հետաձգված հարկը այն գործարքների նկատմամբ, որոնք սկզբնական ճանաչման ժամանակ առաջացնում են հավասար գումարով հարկվող և հանվող ժամանակավոր տարբերություններ:

Այլ բան նշված չլինելու դեպքում չի ակնկալվում, որ նոր ստանդարտները և մեկնաբանությունները զգալի ազդեցություն կունենան Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններին վրա:

**«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

7 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի փոփոխությունները ներկայացված են ստորև.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Հող և շենքեր	Կահույք	Սարքա- վորում- ներ	Փոխադ- րամիջոց- ներ	Այլ	Անավար տ շինարա- րություն	Ընդա- մենը
Սկզբնական արժեքն առ 1 հունվարի, 2019թ.	1,033,880	74,649	215,263	95,232	-	4,358	1,423,382
Կուտակված մաշվածություն	(430,833)	(67,985)	(165,450)	(71,859)	-	-	(736,127)
Հաշվեկշռային արժեքն առ 1 հունվարի, 2019թ.	603,047	6,664	49,813	23,373	-	4,358	687,255
Ավելացումներ	6,196	725	23,551	39,673	-	192,865	263,010
Օտարումներ	-	-	(376)	-	-	-	(376)
Փոխանցում	161,780	22,816	12,586	-	41	(197,223)	-
Մաշվածության գծով ծախս	(46,532)	(2,452)	(24,411)	(12,630)	-	-	(86,025)
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի, 2019թ.	724,491	27,753	61,163	50,416	41	-	863,864
Ավելացումներ	7,835	5,415	29,418	36,066	-	61,163	139,897
Փոխանցում	49,870	5,688	2,624	-	2,981	(61,163)	-
Մաշվածության գծով ծախս	(59,919)	(8,764)	(33,243)	(13,951)	(108)	-	(115,985)
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի, 2020թ.	722,277	30,092	59,962	72,531	2,914	-	887,776

Այս բացահայտման տեղեկատվությունը վերաներկայացվել է (Ծանոթագրություն 3):

Հիմնադրամի Իջևան գյուղի շենքերը կառուցվել են Իջևան համայնքի կողմից Հիմնադրամին 99 տարի օգտագործման համար նվիրաբերված հողատարածքի վրա: Նշված շենքերը չեն հաշվառվել Պետական Կոմիտեի կողմից մինչև հաշվետու ամսաթվի ավարտը: Հիմնադրամի կողմից բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են պետական մարմիններին՝ գրանցումն ավարտելու համար: Դեկլարության ակնկալիքների համաձայն գրանցումը կիրականացվի մինչև 2022թ. մարտ, և հողի օգտագործման իրավունքի հետևանքման ռիսկը գնահատվում է ցածր:

8 Ոչ նյութական ակտիվներ

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Ծրագրային լիցենզիաներ
Սկզբնական արժեքն առ 1 հունվարի, 2019թ.	79,824
Կուտակված ամորտիզացիա առ 1 հունվարի, 2019թ.	(55,912)
Հաշվեկշռային արժեքն առ 1 հունվարի, 2019թ.	23,912
Ավելացումներ Ամորտիզացիոն մասնահանում	5,737 (19,164)
Սկզբնական արժեքն առ 31 դեկտեմբերի, 2019թ.	85,561
Կուտակված ամորտիզացիա առ 31 դեկտեմբերի, 2019թ.	(75,076)
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի, 2019թ.	10,485
Ավելացումներ Ամորտիզացիոն մասնահանում	3,326 (7,993)
Սկզբնական արժեքն առ 31 դեկտեմբերի, 2020թ.	88,887
Կուտակված ամորտիզացիա առ 31 դեկտեմբերի, 2020թ.	(83,069)
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի, 2020թ.	5,818

**«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

9 Պաշարներ

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի, 2020թ.	31 դեկտեմբերի, 2019թ.
Շահառուներին բաշխման ենթակա պաշարներ	63,876	2,087
Վառելիք	5,807	5,122
Այլ	502	-
Ընդամենը պաշարներ	70,185	7,209

10 Տրամադրված կանխավճարներ

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի, 2020թ.	31 դեկտեմբերի, 2019թ. (վերաներկայացված)	1 հունվարի, 2019թ. (վերաներկայացված)
Սկսնակ բիզնեսներին տրամադրված դրամաշնորհներ	59,846	8,212	16,641
Կանխավճարներ աշխատակիցներին	9,078	3,350	3,036
Հարկերի կանխավճարներ	8,859	3,694	3,327
Կանխավճարներ հիմնական միջոցների մաշվածության գծով	8,520	-	-
Շահառուներին տրամադրված դրամաշնորհներ	2,117	10,328	6,134
Այլ կանխավճարներ	9,241	13,592	353
Ընդամենը տրամադրված կանխավճարներ	97,661	39,176	29,491

11 Բանկերում պահվող ավանդներ

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի, 2020թ.	31 դեկտեմբերի, 2019թ. (վերաներկայացված)	1 հունվարի, 2019թ. (վերաներկայացված)
Ավանդներ – դրամական նվերներ	78,389	81,549	74,981
Ավանդներ – բնակարանային ապահովում	-	35,756	28,933
Ընդամենը բանկերում պահվող ավանդներ	78,389	117,305	103,914

Ժամկետային ավանդների սկզբնական մարման ժամկետը հավասար է մեկ տարի:

Ավանդների գծով ԱՊԿ-ն ոչ էական է:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկում ավանդը կապված է Երեխաներին դրամական նվերներ ծրագրի հետ, այդ ծրագրի պայմանների համաձայն այդ գումարի օգտագործումը սահմանափակված է: Հիմնադրամը կարող է ավանդը օգտագործել միայն «Դրամական նվերներ երեխաներին» ծրագրի համար: Այս ծրագրի մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 13-ում:

Ավանդը արտահայտված է ԱՄՆ դոլարով և կազմում է 150,000 ԱՄՆ դոլար, տարեկան 3,2% տոկոսադրույքով: (2019թ. դեկտեմբերի 31-ին՝ Բնակարանային ծրագրի ավանդը կազմում է 35,756 հազար ՀՀ դրամ տարեկան 8,7% տոկոսադրույքով, իսկ «Դրամական նվերներ երեխաներին» ծրագրի համար նախատեսված ավանդը կազմում է 170,000 ԱՄՆ դոլար, տարեկան 3,8 % տոկոսադրույքով):

Ստորև բերված աղյուսակը բացահայտում է Դրամական միջոցների և դրանց համարժեքների մնացորդների վարկային որակը՝ հիմնված վարկային ռիսկի աստիճանների վրա՝ 2020թ. դեկտեմբերի 31-ին, 2019թ. դեկտեմբերի 31-ին և 2019թ. հունվարի 1-ին:

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի, 2020թ.	Ժամկետային ավանդներ 31 դեկտեմբերի, 2019թ. (վերաներկայացված)	1 հունվարի, 2019թ. (վերաներկայացված)
S&P գլոբալ վարկակիչ B+	78,389	117,305	103,914

**«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

12 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	31 դեկտեմբերի, 2020թ.	31 դեկտեմբերի, 2019թ. (վերաներկայացված)	1 հունվարի, 2019թ. (վերաներկայացված)
Բանկերում պահվող դրամական միջոցներ	298,214	268,395	554,891
Դրամական միջոցներ դրամարկղում	508	213	358
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	298,722	268,608	555,249

Արտարժույթով արտահայտված դրամական միջոցների և դրանց համարժեքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 22-ում:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Դրամական նվերներ երեխաներին» ծրագրի ընթացիկ հաշվի մնացորդը կազմել է 6,351 հազ. ՀՀ դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 8,494 հազ. ՀՀ դրամ, 2019թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 11,931 հազ. ՀՀ դրամ):

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Բնակարանային ապահովում» ծրագրի ընթացիկ հաշվի մնացորդը կազմել է 34,874 հազ. ՀՀ դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 9,748 հազ. ՀՀ դրամ, 2019թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 13,638 հազ. ՀՀ դրամ):

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ԱՊԿ-ն ոչ էական է:

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Բանկերում պահվող դրամական միջոցներ		
	31 դեկտեմբերի, 2020թ.	31 դեկտեմբերի, 2019թ. (վերաներկայացված)	1 հունվարի, 2019թ. (վերաներկայացված)
S&P գլոբալ վարկանիշ B+	298,214	268,395	555,249

13 Դրամական նվիրատվությունների գծով պարտավորություններ շահառուներին

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	31 դեկտեմբերի, 2020թ.	31 դեկտեմբերի, 2019թ. (վերաներկայացված)	1 հունվարի, 2019թ. (վերաներկայացված)
Դրամական նվերներ	84,740	90,043	86,912
Ընդամենը դրամական նվիրատվությունների գծով պարտավորություններ շահառուներին	84,740	90,043	86,912

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս երեխաների դրամական նվերների գծով պարտավորությունների շարժը

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ. (վերաներկայացված)
Մնացորդն առ 1 հունվարի	90,043	86,912
Տարվա ընթացքում ստացված դրամական նվերներ	5,034	4,604
Տարվա ընթացքում հատկացված դրամական նվերներ	(20,076)	(3,819)
Փոխարժեքի ազդեցությունը	6,833	(689)
Վաստակած տոկոսներ	2,906	3,113
Ուղղումներ	-	(78)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի	84,740	90,043

**«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
ամ 31 դեկտեմբերի, 2020թ.**

13 Դրամական նվիրատվությունների գծով պարտավորություններ շահառուներին (շարունակություն)

Երեխաների դրամական նվերների գծով մնացորդը ամ 31 դեկտեմբերի, 2020թ. կազմել է 162,144 ԱՄՆ դոլար (համարժեք՝ 84,740 հազ. ՀՀ դրամի), ամ 31 դեկտեմբերի, 2019թ.՝ 187,707 ԱՄՆ դոլար (համարժեք՝ 90,043 հազ. ՀՀ դրամի), և ամ 1 հունվարի, 2019թ.՝ 179,663 ԱՄՆ դոլար (համարժեք՝ 86,912 հազ. ՀՀ դրամի):

14 Հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորություններ

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	31 դեկտեմբերի, 2020թ.	31 դեկտեմբերի, 2019թ. (վերաներկայացված)	1 հունվարի, 2019թ. (վերաներկայացված)
Կենսաթոշակային նպաստներ			
Երկարաժամկետ մաս	155,758	159,688	135,439
Կարճաժամկետ մաս	10,357	10,357	10,619
Ընդամենը հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորություններ	166,115	170,045	146,058

Ստորև բերված աղյուսակում բացահայտվում է հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորությունների շարժը.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ. (վերաներկայացված)
Մնացորդն ամ 1 հունվարի	170,045	146,058
Սպասարկման ծախս	4,016	3,123
Տոկոսային ծախս	12,181	12,506
Փաստացի վճարում	(10,357)	(10,619)
Ակտուարային օգուտ/վնաս	(9,770)	18,977
Մնացորդն ամ 31 դեկտեմբերի	166,115	170,045

Հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորությունները ներառում են լրիվ կենսաթոշակային նպաստներ գյուղում ապրող ՍՕՍ մայրերի և մորաքույրների համար, որը համարժեք է վերջնական աշխատավարձի 60%-ին իրենց կյանքի մնացած ողջ տևողության ընթացքում:

Լրիվ կենսաթոշակային նպաստի ստացման իրավունքի համար անհրաժեշտ պայմանները.

- 15 տարի շարունակ անընդմեջ աշխատելը որպես ՍՕՍ մայր,
- Նորմալ կենսաթոշակային տարիքի լրանալը,
- Թոշակի անցնելիս ՍՕՍ-ում աշխատելու փաստը:

15 Ստացված դրամաշնորհներ

<i>Վկտիվներին վերաբերող շնորհներ</i> <i>Հազ. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
Հետաձգված եկամուտ ամ 1 հունվարի	11,522	28,827
Ստացված նոր դրամաշնորհներ	-	900
Հետաձգված եկամտի ամորտիզացիա՝ հարակից մաշվածությանը համապատասխանեցնելու համար	(6,267)	(18,205)
Հետաձգված եկամուտ ամ 31 դեկտեմբերի	5,255	11,522

**«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

15 Ստացված դրամաշնորհներ (շարունակություն)

<i>Եկամտին վերաբերող շնորհներ</i>		
<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
Հետաձգված եկամուտ առ 1 հունվարի	68,043	251,752
Ստացված նոր դրամաշնորհներ	378,009	155,835
Ճանաչված եկամուտ	(309,300)	(339,544)
Հետաձգված եկամուտ առ 31 դեկտեմբերի	136,752	68,043

16 Պարտավորություններ շահառուների նկատմամբ

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	31 դեկտեմբերի, 2020թ.	31 դեկտեմբերի, 2019թ.
Բնակարանային ապահովման ծրագիր	34,916	45,504
Երեխայի նպաստի խնայողություններ	7,967	12,834
Ընդամենը պարտավորություններ շահառուների նկատմամբ	42,883	58,338

ՍՕՍ-Բնակարանային ապահովման ծրագրի շահառուներ

ՍՕՍ-Բնակարանային ապահովման ծրագիրը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներառում է 29,140 հազար ՀՀ դրամի պարտավորություններ 61 ՍՕՍ անկախ ապրող երիտասարդի և կիսաանկախ ապրող երիտասարդի նկատմամբ (2019թ.՝ 29,506 հազ. ՀՀ դրամ՝ 59 երիտասարդի համար) և պահուստ բնակարանային ապահովման ծրագրի գծով՝ 620 հազ. ՀՀ դրամի չափով՝ 5,776 հազ. ՀՀ դրամի չափով (2019թ. դեկտեմբերի 31-ին՝ 15,998 հազ.): 2020թ. երեք երիտասարդների բնակարանային ապահովման գծով աջակցություն է իրականացվել 12,800 հազ. ՀՀ դրամ ընդհանուր գումարով (2019թ.՝ մեկ երիտասարդի՝ 5 000 հազ. ՀՀ դրամ):

Երեխայի նպաստի խնայողություններ

2020թ. դեկտեմբերի 31-ին Երեխայի նպաստի խնայողությունները ներառում են պարտավորություններ 62 ՍՕՍ-երիտասարդների նկատմամբ (2019թ.՝ 67 ՍՕՍ երիտասարդների նկատմամբ):

17 Հաշվեգրված ծախսեր և այլ պարտավորություններ

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	31 դեկտեմբերի, 2020թ.	31 դեկտեմբերի, 2019թ.
Ամենամյա արձակուրդների չօգտագործված օրեր	31,177	30,548
Առևտրի վճարներ	4,000	4,000
Այլ պարտավորություններ	-	7,765
Ընդամենը հաշվեգրված ծախսեր և այլ պարտավորություններ	35,177	42,313

**«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

18 Եկամուտ նվիրատվություններից

Հազ. ՀՀ դրամ	2020թ.			2019թ.		
	Առանց սահմանափակման	Սահմանափակված	Ընդամենը	Առանց սահմանափակման	Սահմանափակված	Ընդամենը
Եկամուտներ SOS International-ից	1,407,645	290,096	1,697,741	1,434,183	123,440	1,557,623
Եկամուտներ դրամահավաքից և բնափրային նվիրատվություններից	109,464	7,952	117,416	45,448	10,146	55,594
Եկամուտներ պետական սուբսիդիաներից և դրամաշնորհներից	12,777	43,356	56,133	12,216	-	12,216
Ընդամենը եկամուտ նվիրատվություններից	1,529,886	341,404	1,871,290	1,491,847	133,586	1,625,433

19 Ծրագրի/նախագծի ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	2020թ.	2019թ. (վերաներկայացված)
Շահառուներին տրամադրված ակտիվներ և ծառայություններ		
Շահառուներին տրամադրված պաշարներ	226,332	93,802
Շահառուներին դրամական միջոցների տրամադրում	154,354	153,386
Շահառուներին վարձավճարի փոխհատուցում	47,094	44,919
Դեղորայք և բժշկական ծառայություններ	44,506	19,338
Կրթական և վերապատրաստման ծառայությունների վճարներ	43,639	43,000
Հոգե-սոցիալական ծառայություններ	20,069	18,060
Ամառային ճամբար	5,824	38,350
Շահառուներին տրամադրված ակտիվներ և ծառայություններ	541,818	410,855
Անձնակազմի գծով ծախսեր	684,967	590,751
Մաշվածություն և ամորտիզացիա	100,255	77,257
Վերանորոգում և սպասարկում	44,675	47,883
Հասարակայնության հետ կապերի ծախսեր	30,602	20,576
Օգտագործված պաշարներ	20,778	13,679
Ապահովագրության ծախսեր	14,603	14,281
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	10,315	14,287
Վերապատրաստման ծախսեր	9,358	10,481
Կոմունալ ծախսեր	5,948	5,844
Իրավաբանական ծառայություններ	1,579	2,597
Մասնագիտական ծառայություններ	1,350	1,350
Այլ ծախսեր	14,863	18,693
Ընդամենը ծրագրի/նախագծի ծախսեր	1,481,111	1,228,534

**«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

20 Վարչական ծախսեր

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
Անձնակազմի գծով ծախսեր	109,593	96,492
Անդամավճարներ	101,149	84,765
Մաշվածություն և ամորտիզացիա	23,723	27,933
Հասարակայնության հետ կապերի ծախսեր	19,456	8,774
Վերանորոգում և սպասարկում	9,281	13,480
Վերապատրաստման ծախսեր	4,932	8,824
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	5,512	23,305
Կոմունալ ծախսեր	3,934	4,252
Ապահովագրության ծախսեր	1,307	1,269
Օգտագործված պաշարներ	3,402	1,547
Մասնագիտական ծառայություններ	4,250	8,619
Այլ ծախսեր	19,756	21,952
Ընդամենը վարչական ծախսեր	306,295	301,212

21 Պայմանական դեպքեր և պարտավորություններ

Իրավական գործընթացներ. Ժամանակ առ ժամանակ սովորական գործունեության ընթացքում Հիմնադրամի դեմ կարող են ներկայացվել հայցեր: Իր գնահատականների և արտաքին մասնագիտական խորհրդատվության հիման վրա ղեկավարությունը կարծում է, որ պահանջների գծով ոչ մի էական վնաս չի կարող կրել, որը կգերազանցի սույն ֆինանսական հաշվետվություններում նախատեսված պահուստները:

2020թ., 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի դեմ հարուցված քրեական գործեր չեն եղել:

Տրանսֆերային գնագոյացում. տրանսֆերային գնագոյացման (ՏԳ) օրենսդրությունը ընդհանուր առմամբ համահունչ է ՏԳ միջազգային սկզբունքներին, որոնք մշակվել են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից, չնայած այն ունի որոշակի առանձնահատկություններ: ՏԳ օրենսդրությունը նախատեսում է վերահսկվող գործարքների (գործարքներ կապակցված կողմերի միջև և որոշակի գործարքներ չկապակցված կողմերի միջև) լրացուցիչ հարկային գնահատման հնարավորություն, եթե նման գործարքները տեղի չեն ունեցել պարզաձև ձևով: Ղեկավարությունն իրականացրել է ներքին վերահսկողություն՝ ընթացիկ ՏԳ օրենսդրությանը համապատասխանության ապահովման նպատակով:

Վերահսկվող գործարքներից բխող հարկային պարտավորությունները որոշվում են՝ ելնելով դրանց փաստացի գործարքների գներից: Հնարավոր է, որ ՏԳ կանոնների մեկնաբանման զարգացմանը զուգընթաց նման գները վիճարկվեն: Նման մարտահրավերի ազդեցությունը չի կարող արժանահավատորեն գնահատվել այն կարող է նշանակալից լինել ֆինանսական վիճակի և/կամ Հիմնադրամի գործունեության համար:

Հարկային օրենսդրություն. Հայաստանի հարկային համակարգին բնորոշ են օրենսդրության հաճախակի փոփոխությունները, որը երբեմն մեկնաբանությունների կարիք ունի: Տարբեր հարկային մարմինների և իրավագործությունների դեպքում հաճախ առկա են տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են վերանայման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք օրենքի ուժով կարող են կիրառել տույժեր և տուգանքներ:

Այս փաստերը կարող են զգալիորեն ավելի շատ հարկային ռիսկեր ստեղծել Հայաստանում՝ այլ զարգացած երկրների համեմատ: Ղեկավարությունը կարծում է, որ հարկային օրենսդրության մեկնաբանության հիման վրա պատշաճ կերպով ապահովվել է հարկային պարտավորությունները: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինները կարող են տարբեր մեկնաբանություններ ունենալ, որոնց ազդեցությունը կարող է էական լինել:

**«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

22 Ֆինանսական ռիսկերի կառավարում

Հիմնադրամը ենթարկվում է ֆինանսական գործիքների հետ կապված տարբեր ռիսկերի: Ամենաեական ֆինանսական ռիսկերը, որոնց ենթարկվում է Հիմնադրամը, նկարագրված են ստորև:

Շուկայական ռիսկ. Հիմնադրամը ենթակա է շուկայական ռիսկերի ազդեցության: Շուկայական ռիսկերն առաջանում են. (ա) արժույթի, (բ) տոկոսային ակտիվների և պարտավորությունների բաց դիրքերից, որոնք բոլորն էլ ենթարկվում են ընդհանուր և առանձնահատուկ շուկայական շարժերի: Ղեկավարությունը սահմանում է ռիսկի ընդունելի մակարդակը, որը վերահսկվում է օրական կտրվածքով: Այնուհանդերձ, այս մոտեցման կիրառումը չի կանխում այս սահմանաչափերը գերազանցող վնասների առաջացումը՝ ունենում ավելի նշանակալի շուկայական շարժեր տեղի ունենալու դեպքում:

Արժույթային ռիսկ. Արժույթային ռիսկի գծով ղեկավարությունը սահմանում է սահմանաչափեր ռիսկերի նկատմամբ խոցելիության մակարդակի համար՝ ըստ արժույթի և ընդհանուր առմամբ՝ ինչպես շուրջօրյա, այնպես էլ օրական դիրքերի գծով, որոնք վերահսկվում են ամենօրյա հիմունքով:

Ստորև ներկայացված աղյուսակում ամփոփված է արտարժույթի փոխարժեքի ռիսկի ազդեցությունը Հիմնադրամի վրա հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հազ. ՀՀ դրամ	Առ 31 դեկտեմբերի, 2020թ.			Առ 31 դեկտեմբերի, 2019թ.		
	Դրամական ֆինանսական ակտիվներ	Դրամական ֆինանսական պարտավորություններ	Չուտ դիրք	Դրամական ֆինանսական ակտիվներ	Դրամական ֆինանսական պարտավորություններ	Չուտ դիրք
ԱՄՆ դոլար Եվրո	88,488 42,052	(83,830) -	4,658 42,052	96,572 102,521	(90,043) -	6,529 102,521
Ընդամենը	130,540	(83,830)	46,710	199,093	(90,043)	109,050

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է շահույթի և վնասի և սեփական կապիտալի զգայունությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կիրառվող փոխարժեքի հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթի հետ հարաբերակցությամբ, բոլոր այլ փոփոխականները հաստատուն պահելով:

Հազ. ՀՀ դրամ	Առ 31 դեկտեմբերի, 2020թ.		Առ 31 դեկտեմբերի, 2019թ.	
	Ազդեցությունը ֆինանսական գործունեության մասին հաշվետվության վրա	Ազդեցությունը գուտ ակտիվների վրա	Ազդեցությունը ֆինանսական գործունեության մասին հաշվետվության վրա	Ազդեցությունը գուտ ակտիվների վրա
ԱՄՆ դոլարի արժևորում 20%-ով	932	932	1,306	1,306
ԱՄՆ դոլարի անկում 20%-ով	(932)	(932)	(1,306)	(1,306)
Եվրոյի արժևորում 20%	8,410	8,410	20,504	20,504
Եվրոյի անկում 20%-ով	(8,410)	(8,410)	(20,504)	(20,504)

Տոկոսադրույքի ռիսկ.

Հիմնադրամը չի ենթարկվում այս ռիսկին, քանի որ այն չունի այլ տոկոսաբեր ակտիվներ և պարտավորություններ, բացի Ծանոթագրություն 12-ում ներկայացված բանկային ավանդից, իսկ բանկային ավանդներն ունեն ֆիքսված տոկոսադրույքներ:

Իրացվելիության ռիսկ.

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ կազմակերպությունը կարող է ունենալ դժվարություններ իր ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակ:

22 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Հիմնադրամը ունի ամենօրյա հիմունքով իր հասանելիք դրամական միջոցների հասանելիության անհրաժեշտություն: Իրացվելիության ռիսկը կառավարվում է Հիմնադրամի ղեկավարության և ՍՕՍ միջազգային գանձապետարանի կողմից: Ղեկավարությունը վերահսկում է Հիմնադրամի դրամական միջոցների հոսքերի ամսական շարժի կանխատեսումները:

Հիմնադրամի իրացվելիության պորտֆելը ներառում է դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (Ծանոթագրություն 12), ավանդների ներդրումներ (Ծանոթագրություն 11): Ղեկավարության գնահատմամբ, իրացվելիության պորտֆելի դրամական միջոցները և բանկային ավանդները կարող են վերածվել կանխիկի մեկ օրվա ընթացքում՝ իրացվելիության չնախատեսված պահանջները բավարարելու համար:

Իրացվելիության դիրքը վերահսկվում է Հիմնադրամի ղեկավարության և ՍՕՍ միջազգային գանձապետարանի կողմից, և ղեկավարությունը իրականացնում է իրացվելիության սթրեսի կանոնավոր ստուգում տարբեր սցենարներով՝ հաշվի առնելով շուկայական նորմալ և ավելի խիստ պայմաններ:

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս 2020թ. դեկտեմբերի 31-ի պարտավորությունները՝ ըստ դրանց մնացած պայմանագրային մարման ժամկետի: Ժամկետայնության աղյուսակում բացահայտված գումարները պայմանագրային չգեղջկած դրամական միջոցների հոսքերն են:

Երբ վճարման ենթակա գումարը ֆիքսված չէ, բացահայտված գումարը որոշվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջում առկա պայմանների հիման վրա: Արտարժույթով վճարումները փոխակերպվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջի սփոթ փոխարժեքով:

Ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	12 ամիս – 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
Պարտավորություններ						
Ստացված դրամաշնորհներ Առևտրային և այլ	47,336	94,671	-	-	-	142,007
կրեդիտորական պարտքեր	5,734	-	-	-	-	5,734
Պարտավորություններ շահառուների նկատմամբ	42,883	-	-	-	-	42,883
Հաշվեգրված ծախսեր և այլ պարտավորություններ	35,177	-	-	-	-	35,177
Դրամական նվիրատվությունների գծով պարտավորություններ շահառուներին	48,325	-	-	27,229	9,186	84,740
Ընդամենը ապագա վճարումներ	179,455	94,671	-	27,229	9,186	310,541

Ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է.

**«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

22 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	12 ամիս – 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
Պարտավորություններ						
Ստացված դրամաշնորհներ և ներդրումներ և այլ	26,522	53,043	-	-	-	79,565
կրեդիտորական պարտքեր	4,927	-	-	-	-	4,927
Պարտավորություններ շահառուների նկատմամբ	58,338	-	-	-	-	58,338
Հաշվեգրված ծախսեր և այլ պարտավորություններ	42,313	-	-	-	-	42,313
Դրամական նվիրատվությունների գծով պարտավորություններ շահառուներին	60,134	-	-	16,544	13,365	90,043
Ընդամենը ապագա վճարումներ	192,234	53,043	-	16,544	13,365	275,186

23 Իրական արժեքի բացահայտումներ

Իրական արժեքի չափումների վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայում ունեցած մակարդակի, հետևյալ կերպ՝ (i) մակարդակ 1՝ չափումներ ակտիվ շուկայում նույնական ակտիվների կամ պարտավորությունների գնանշվող (չճշգրտվող) գներով, (ii) մակարդակ 2՝ չափման գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալներն ուղղակիորեն (գներ) կամ անուղղակիորեն (գների հիման վրա ստացված) դիտելի են, (iii) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն բացառապես շուկայի դիտարկելի տվյալների վրա (այն է՝ գնահատման համար անհրաժեշտ են նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ): Դեկավարությունը կիրառում է դատողություն ֆինանսական գործիքները դասակարգելիս՝ օգտագործելով իրական արժեքի հիերարխիան: Եթե իրական արժեքի գնահատման համար օգտագործվում են էական ճշգրտում պահանջող դիտարկելի ելակետային տվյալներ, ապա տվյալ գնահատումը մակարդակ 3-ի գնահատում է: Գնահատման ելակետային տվյալների էականությունը գնահատվում է իրական արժեքի ամբողջական գնահատման հետ համադրությամբ:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ: Ֆիքսված տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը հիմնված է կանխատեսված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա, որոնք ակնկալվում է, որ կստացվեն՝ զեղչված համանման պարտքային ռիսկ և մարման մնացորդային ժամկետ ունեցող նոր գործիքների համար գործող ընթացիկ տոկոսադրույքներով: Օգտագործված զեղչման դրույքաչափերը կախված են գործընկերոջ պարտքային ռիսկից:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող պարտավորություններ. Այլ պարտավորությունների իրական արժեքը որոշվել է՝ օգտագործելով գնահատման մեթոդներ: Սահմանված մարման ժամկետով ֆիքսված տոկոսադրույքներով գործիքների իրական արժեքը գնահատվել է՝ հիմնվելով ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա, որոնք զեղչվել են համանման վարկային ռիսկ և մարման մնացորդային ժամկետ ունեցող նոր գործիքների համար գործող ընթացիկ տոկոսադրույքներով:

24 Փոխկապակցված կողմերի գծով մնացորդներ և գործարքներ

Կողմերը սովորաբար համարվում են փոխկապակցված, եթե դրանք գտնվում են ընդհանուր վերահսկողության տակ կամ եթե կողմերից մեկն ունի կարողություն վերահսկելու մյուս կողմին կամ կարող է ունենալ նշանակալի ազդեցություն կամ համատեղ վերահսկողություն մեկ այլ կողմի նկատմամբ՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Յուրաքանչյուր հնարավոր փոխկապակցված կողմի հարաբերությունն դիտարկելիս ուշադրություն է դարձվում հարաբերության բնույթի, այլ ոչ միայն իրավական կառուցվածքի վրա:

2020թ. դեկտեմբերի 31-ին և 2019թ. դեկտեմբերի 31-ին Հիմնադրամը չի ունեցել չմարված մնացորդներ փոխկապակցված կողմերի հետ:

**«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի, 2020թ.**

24 Փոխկապակցված կողմերի գծով մնացորդներ և գործարքներ (շարունակություն)

Փոխկապակցված կողմերի հետ եկամուտների և ծախսերի հոդվածները 2020թ. դեկտեմբերի 31-ին և 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար հետևյալն էին.

Հազ. ՀՀ դրամ	Համատեղ վերահսկվող ընկերություններ	
	2020թ.	2019թ.
Եկամուտ ՍՕՍ ընկերակցություններից ստացված նվիրատվություններից	1,697,741	1,557,623

Հատուցում առանցքային ղեկավար անձնակազմին. Առանցքային ղեկավար անձնակազմը ներառում է Ազգային տնօրենին, հոգաբարձուների խորհրդի անդամներին, գլխավոր հաշվապահին.

Հազ. ՀՀ դրամ	2020թ.		2019թ.	
	Ճախս	Հաշվեգրված պարտավորություն	Ճախս	Հաշվեգրված պարտավորություն
Կարճաժամկետ հատուցումներ - Աշխատավարձ	30,415	569	27,515	777
Արձակման նպաստներ	1,772	-	-	-
Ընդամենը հատուցում առանցքային ղեկավար անձնակազմին	32,187	569	27,515	777

25 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ժամանակաշրջանից հետո սույն հաշվետվությունում բացահայտման ենթակա նշանակալից դեպքեր տեղի չեն ունեցել: